Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՓԱՐ

3(720)
2026
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Լусарар ● ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ ● Lusarar

Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ

Մի՞թե դժվար է

Հայոց Գրական Ընկերության առաջին երեկույթի բացմանը մեր գրեթե ամեն մի ուղղության ու ամեն հոսանքի մարդիկ միասին հավաքվեցին, միևնույն զգացմունքով, միևնույն անկեղծությամբ խոսեցին միևնույն առարկայի վրա հաշտ ու համերաշխ: Էս երևույթը էնքան լավ էր ազդել մերոնցից շատերի վրա, որ չէին իմանում ինչպես արտահայտեն իրենց ուրախությունը, իսկ նրանց ուրախությունը էնքան ծանր է ազդել ինձ վրա, որ չեմ իմանում ինչպես հայտնեմ իմ վիշտը:

Մի՞թե հիրավի, միտք եմ անում ես, մենք էնքան ենք զուրկ առաքինություններից, որ մի լավ գործի մեջ էլ իրար կողքի կանգնելն ու միասին ուրախանալը պետք է էսքան մեզ զարմացնի ու էսքան ուրախացնի:

Եվ հեռու է տանում ինձ էս մտածմունքն ու ավելի մեծ է վիշտը:

Կյանքն՝ իր ամբողջության մեջ՝ մեծ է, շատ է մեծ: Կյանքը- տիեզերական կյանքն է, և մարդու կյանքի ամբողջ վեհությունն ու քաղցրությունն էլ հենց էն է, որ իր շրջապատի միջոցով ապրի էն մեծ կյանքով: Բայց մարդը սովորաբար չի կարողանում ապրել էն մեծ կյանքով, ապրում է միայն նրա մի մասով- մարդկության կյանքով: Սակայն նույնիսկ դրանով- մարդկության կյանքով ապրելու էլ քչերն են ընդունակ: Չէ՞ որ կյանքն ինչպես անսահման մեծ է, էնպես էլ փոքր է անսահման: Եվ ահա ընդհանրապես ապրում են ավելի նեղ ու փոքրիկ կյանքերով: Կա ազգային կյանք, պետական կյանք, դասակարգային կյանք, կուսակցական կյանք, ավելի - նեղ թայֆայական կյանք - թշնամու բանակների պես կանգնած իրար դեմ մինչև էն պստլիկ ես-ը... էսպես էլ գնալով, գնալով էնքան է նեղանում ու նեղստանում, մինչև կտրում է մարդ արարածի ազատ շունչը ու բանն էնտեղ է հասնում, որ նույնիսկ իրար հարազատ մարդիկ զարմանում են, որ կարող են իրար կողքի կանգնել ու միասին ուրախանալ:

Ո՜վ ողորմելի ուրախություն, ի՜նչքան ցավալի բաներ ես ասում դու...

Բայց մի՞թե ճշմարիտ է, էդքանն էլ չկա մեր մեջը: Մի՞թե անկարելի է լինել առանձին կարծիքի ու համոզմունքի և հարգել իրար ու նույնիսկ միասին ուրախանալ: Մի՞թե դեռ ժամանակը չի հասել, որ կարողանանք լինել ավելի լայն սիրտ, ավելի համբերատար, ավելի ներող ու սիրող, քան թե ենք: Մենք շատ ենք քարացել չկամության ու չարակամության մեջ, շատ ենք ընտելացել ատելության մաղձի դառնությանը ու դարձել ենք ատելի. մի՞թե խորթ ու անմատչելի պիտի մնա մեզ սիրո պայծառ զգացմունքը, մի՞թե չենք կարող իրար մոտենալ, բարության աչքերով նայել իրար ու տեսնել իրար մեջ մեր լավ կողմերը, քանզի մարդ չկա, որ լավ կողմեր չունենա, ու էսպեսով էլ կյանքը դարձնել քաղցր ու սիրելի:

Մի՞թե դժվար է:

1913

ԼԵՎՈՆ ԽԵՉՈՅԱՆԻ ՀԱՎԱՏԻ ԿԻՆԸ



Լևոն Խեչոյանը նորօրյա հայ արձակի բացառիկ և ինքնատիպ դեմքերից է, թերևս իր տեսակի մեջ միակն ու անկրկնելին, քանի որ նրա թողած գրական ժառանգությունը, մինչ իրեն ապրած մեր բոլոր մեծերի զորության կնիքը կրելով հանդերձ, տարբեր է ու նոր: Նրա գրչին հատուկ դիցաբանական-ասքային ոճը, մարդկային հոգու, իրերի և երևույթների խորքը պեղելու ու անսպասելի բացահայտումներով ընթերցողին անակնկալի բերելու ունակությունը, որպես հոգեմտավոր հաղորդակցման յուրուրույն ձև ընտրված խորհրդանիշ-ծածկագրերի փիլիսոփայությունը, քաղաքացիական հաստատուն կեցվածքը նրան դարձնում են մեր ժամանակի ամենաառեղծվածային ու մինչև վերջ չբացահայտված արվեստագետը: Այս առումով մեր գրականության մեջ նրան կարելի է կոչել «չասվածի վարպետ», ով մղում է ընթերցողին դառնալու համահեղինակ՝ ապավինելով սեփական երևակայության ուժին ու կենսափորձին: Նրա պատմվածքները կարելի է անվերջ ընթերցել ու ամեն անգամ դրանք նորովի հայտնագործել, իսկ կարևորն այն է, որ տարաբնույթ այդ զգացողությունները օգնում են քո տեսակը հասկանալու և ինքդ քեզ ավելի լավ ճանաչելու: Երիցս իրավացի էր նա, երբ ասում էր. «Ինչպես Աստծո կողմից ուղարկված առաքյալները, այդպես էլ արվեստագետներն են գալիս, գալիս են՝ երկրագնդի վրա իրենց աղոթքը անելու, որպեսզի մահկանացուի կյանքը թեթև, հեշտ, գեղեցիկ լինի»: Մեզ մնում է խոստովանել. «Դու աղոթել ես, Դու աղոթել ես ծնկաչոք, և Քո աղոթքը Աստծուն է հասել»…

Արցախյան պատերազմի բովով անցած ազատամարտիկ-գրողի «Սև գիրք, ծանր բզեզ» գիր քը և մի շարք պատմվածքներ այդ դաժան տարիների արձագանքներն են, մեծ հայրենասերի ու համամարդու ընդվզումը մարդկության հորինած ամենամեծ չարիքի՝ պատերազմի դեմ: Նա այն տարիքում էր, երբ, ինչպես ինքն էր ասում՝ «ծունկդ չի ծալվում հայրենիքիդ ծանրության տակ», բայց, արի տես, որ դարեր շարունակ պարտվելուց հետոյի հաղթանակը չկարողացանք արժևորել և օգտվել նրանից: Նրա քաղաքացիական հաստատուն կեցվածքը անխախտ մնաց մինչև վերջ, քանի որ «միակ բանը, որ գրողը կարող է անել՝ ազնիվ խոսք ասելն է»: Գրողի զենքը իր ազնիվ խոսքը համարող արվեստագետը անվրեպ օգտագործեց այն: Մեր պատերազմի օրինակով մարդկության պատմությանը հայտնի հազարավոր պատերազմներն ասես սրբագրել էր ուզում՝ մի կողմ թողնելով թշնամուն նսեմացնելով հաղթելու ցանկությունը: «Անգամ թշնամու գերի ընկած զինվորը մարդ է, որի մահը կամ խաթարումը ցավ է պատճառում: Ես որևէ մեկի մահով չեմ ուրախանում»,- հարցազրույցներից մեկում ասել է Խեչոյանը: Գրողի անժամանակ մահը անլցնելի կորուստ եղավ ոչ միայն մեր գրականության, այլև հայրենիքի համար, նրա տաղանդի բազմաթիվ երկրպագուների համար: Նա համոզված էր, որ «գրելը կորուստների վերադարձն է. երբ որ հայրենիքից, երկրից մի գույն է կորչում, դու քո գրելով վերադարձնում ես այդ գույնը»: Այս հարցազրույցը, որն արվել է 2013-ի ամռանը Ստեփանակերտում՝ գրողի մահից մի քանի ամիս առաջ, և որից, խոստովանեմ, դժվարությամբ եմ բաժանվում, թող լինի կորստի վերադարձ… Նաև՝ գրողի ուղերձը հայ կնոջը, չէ՞ որ «ի վերջո, կնոջ համար է, որ տղամարդը գնում է զոհվելու»…

- Հայուհին՝ ըստ Լևոն Խեչոյանի:

- Հայուհին, առաջին հերթին, ընտանիքն է, հայի հարատևող օջախն է: Ի տարբերություն ուրիշ ազգերի կանանց՝ հայուհին հատուկ կերպար է, տեսակ: Որ այսքան ողբերգություններ միջով ազգը, պետությունը անցնելուց հետո չի փլուզվել, դա հենց հայուհու շնորհքն է, այդ ամենը պահվեց հայուհու տեսակի շնորհիվ: Հայ կինն արժանի է մեծ հարգանքի, որովհետև առաջին հերթին այդ կինն է, որ կարողանում է մեզ պատերազմ տանել, այդ կինն է, որ մեզ մղում է ստեղծագործելու, մեզ ռոմանտիկ ոգի է տալիս: Սա է հայուհու առանձնահատկությունը, և սա պիտի կարողանանք պահպանել:

- Հայուհու տեղն ու դերը ընտանիքում և հասարակական կյանքում ինչպե՞ս եք գնահատում: Արդյո՞ք կնոջ տեղը միայն խոհանոցն է:

- Ես կարծում եմ՝ ոչ: Մեր քաղաքական գործիչները պիտի այնքան խելացի լինեն, որ կնոջը տեղ տան նաև իշխանության, կառավարման համակարգում: Հայ կինը շատ իմաստուն է, դարեր շարունակ ինքն է պահել մեր օջախը, ուրեմն նրան նաև իշխանության մեջ պիտի տեղ տալ, որովհետև նրա իմաստությունն ավելի խելացի կդարձնի կառավարումը: Մենք չպիտի մոռանանք, որ հայուհի էր նաև Խանդութ խաթունը «Սասունցի Դավիթ» էպոսում, նույնիսկ էպոս չէի ասի, «Սասունցի Դավիթը» մեր Աստվածաշունչն է, որտեղ ի՜նչ հերոսական կերպար է Խանդութը՝ օջախ պահելու, ամուսնուն ոգևորելու, նորանոր գործերի մղելու առումով: Այս կտրվածքով պիտի գնահատել հայ կնոջը: Ես չեմ ասում, որ հայ կինը բոլորից լավն է, բայց որ հայ կինը տարբերվում է ուրիշ ազգերի կանանցից, փաստ է, լավ թե վատ՝ դրա մասին չէ խոսքը, նա յուրահատուկ տեսակ է, նրան դարերի ընթացքում մեր պատմությունն է այդպիսին դարձրել: Հիմա, երբ խաղաղ ժամանակներ են, հայ տղամարդուց պահանջվում է այդ էակին ավելի խնամքով ու քնքշորեն մոտենալ:

- Որքան հասկացա՝ Խանդութի կերպարի հանդեպ յուրահատուկ վերաբերմունք ունեք: Վերհիշենք մի դրվագ էպոսից, երբ նա գուսաններ է ուղարկում Դավթի մոտ, որ իր գովքն անեն, և Դավիթը սիրահարվի իրեն: Արդյո՞ք հայ իրականությանը հարիր էր կնոջ նման քայլը, և ինքներդ ընդունո՞ւմ եք, երբ կինն է նախաձեռնում ծանոթությունը, կամ սիրո ու ընտանիք կազմելու գաղափարը:

- Նախ ասենք, որ Խանդութն ինքն էլ թագավորի աղջիկ էր, գիտեր՝ տոհմական թագավորությունն ինչ է, և նա դա արեց այն ժամանակ, երբ Դավիթը Մսրա Մելիքին հաղթել էր: Դավիթը երկիր պահողի, զինվորի, դյուցազնի կերպար է: Դա արվեց այն ժամանակ, երբ նա ծառայություն ուներ երկրի, հայրենիքի առաջ, այսինքն՝ արժանի էր դրան: Այս դեպքում՝ իհարկե:

- Ինչպե՞ս եք նայում, եթե մեր օրերում աղջիկն առաջինը խոստովանի իր զգացմունքների կամ սիրո մասին:

- Կարծում եմ՝ դրանում ոչ մի վատ բան չկա, ճիշտ է, ավանդական ինչ-որ բաներ խախտվում են, բայց դա այն դեպքը չէ, որից կործանում է գալիս: Ի՞նչ է պատահել որ, այո, կարելի է:

- Այսօր շատ է խոսվում գենդերային խտրականության, ֆեմինիզմի, կնոջ և տղամարդու իրավահավասարության մասին: Ինչի՞ց կուզենայիք զերծ պահել հայուհուն և հայ ընտանիքը:

- Ես կարծում եմ՝ այդ ֆեմինիզմը, գենդերային հավասարությունը և այլն, մեզ համար չեն, բայց միաժամանակ գիտեմ, որ ամեն ինչ հարթ չէ մեր իրականության մեջ: Բնությունից այնպես է տրված, որ կինն ավելի թույլ է, տղամարդը՝ ավելի ուժեղ: Երբեք բնությանը դեմ գնալ պետք չէ: Կնոջը պիտի հարգել որպես թույլ էակի: Մեզ մոտ հիմնական խնդիրն այն է, որ տղամարդը պիտի կնոջը հարգի: Երբ նա կնոջը հարգում է, չեմ կարծում, թե այդ դեպքում չարաշահումներ կլինեն: Իրեն հարգող որևէ տղամարդ կնոջ վրա ձեռք չի բարձրացնի, կնոջ իրավունքները չի ճնշի: Հարգանքի խնդիր կա հայ ընտանիքներում, մնացած ամեն ինչը բխում է սրանից:

- Կա՞ կնոջ կերպար, որ Ձեզ ոգևորել է, ներշնչանքի աղբյուր է Ձեզ համար:

- Այո, իհարկե: Դա հայոց Աստվածաշնչի՝ «Սասունցի Դավիթ»-ի մեջ Խանդութ խաթունի կերպարն է, Դեղձուն Ծամի կերպարն է, շատ մեծ կերպարներ են, որոնք մեզ ուսուցանում են, և որոնց հետևից հայ կինը պիտի կարողանա գնալ: Երբ Դավիթը գալիս է Խանդութին ուզելու, հոր այգում Խանդութը ապտակում է Դավիթին՝ իրեն համբուրելու համար: Դավիթի քիթ-բերանից արյուն է հոսում, և նա խռովում է, ձին հեծնում ու գնում է: Մեկ էլ արևամուտին հետ է նայում, տեսնում՝ Խանդութը ոտաբոբիկ գնում է իր հետևից՝ ասելով. «Ուր էլ գնաս, ես գալու եմ քո հետևից»: Սա է ինձ ոգևորողը, ինձ համար հետաքրքիրը. կնոջ կերպար, որ տղամարդուն տեսել էր, որ գիտի՝ զորությունը տղամարդու մեջ է, որ հայրենիքը պահելու ուժը տղամարդու մեջ է, և չի լքում նրան:

- Իսկ Ձեր գերդաստանի կանանցից ո՞ւմ կառանձնացնեիք:

- Մերոնք տոհմիկ էրզրումցիներ են և այդ սև գաղթի արդյունքում եկել ու վերաբնակվել են Ջավախքում: Նման դեպքերում տոհմիկ սովորույթները պահվում էին: Շատ հետաքրքիր էր Հայկուշ տատիս կերպարը, որ մեզ դաստիարակում էր իր իմացած ձևով, իր հեքիաթներով: Նրա դաստիարակության, նրա հեքիաթների մեջ միշտ ներկա էր հայրենիքի կերպարը, ամեն ինչ դրա շուրջն էր կառուցում՝ հեքիաթն էլ, կենցաղն էլ, հողի հետ հարաբերվելն էլ:

- Ի՞նչն եք անհամատեղելի համարում հայուհու կերպարի հետ:

- Ինձ միշտ ցավ է պատճառել դավաճանությունը. ընտանիքում միշտ էլ դավաճանությունն անընդունելի է եղել՝ ինչպե՛ս և ի՛նչ շեշտադրությամբ ուզում եք հասկացեք: Երբեք ես չեմ ներել նաև մեր իշխանություններին. երբ ես լսում եմ, որ հայ կինը Թուրքիայում է, հայ կինը մեր՝ համար մեկ թշնամու դուռը գնում է աշխատելու: Ես չեմ ներում դա, չգիտեմ՝ լավ է, վատ է… Ես չեմ ներում, երբ հայ կինը գնում է արաբական աշխարհներ՝ փող վաստակելու, ընտանիք պահելու: Սա ամենաանթույլատրելի բանն է մեզ համար, մեր իշխանությունների համար: Ես չեմ ներում, երբ տեսնում եմ՝ հայ կինը սրճարաններում մատուցողուհի է: Նա մեր մայրական գենոֆոնդն է, ինչպե՞ս կարելի է ամբողջ 18 ժամ թողնենք, որ մեր կինը սրճարաններում մատուցող աշխատի, երբ նա պիտի պատրաստվի երեխա ունենալու: Չեմ ներում, և անընդունելի է ինձ համար:

- Ինչպիսի՞ն կուզենայիք տեսնել 21-րդ դարի հայուհուն:

- Կուզենայի տեսնել ուժեղ, խնդալից աչքերով, հավատով՝ իր տղամարդու և իր երկրի հանդեպ, պատրաստ՝ ծաղկեցնելու օջախը:

- Ձեր ստեղծագործություններում պատկերված կանանցից ո՞ւմ մեջ փնտրել կնոջ Ձեր իդեալը:

- Եվ պատմվածքներում, և՛ վեպերում, և՛ հեքիաթների մեջ, բոլոր գործերում եղած կերպարների մեջ դրված է իմ հավատի կինը, իմ պատկերացրած կնոջ կերպարը: Նրան մեկի մեջ չպետք է փնտրել, բոլորի մեջ կա: Ես աշխատել եմ միշտ ուժեղ կին ստեղծել՝ իր ուժով, իր հավատով. թեկուզ ինքը թույլ է, բայց իր ուժով ու հավատով՝ տղամարդուն հավասար: Այսինքն՝ հավասար՝ փորձանքին դեմ գնացող, հավասար՝ դժվարություններին դեմ գնացող, երբեք չդավաճանող իր ընտանիքին, իր հայրենիքին, իր օջախին:

- Ձեր ամենօրյա «Հայր մերը»:

- Հենց ինքը «Հայր մերն» է՝ եթե չեմ մոռանում, երբեմն տկարություն եմ ունենում և մոռանում եմ, որ պիտի այսօր աղոթեի…

Հարցազրույցը՝
Մելանյա ՄԻԼՈՆՅԱՆԻ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒՂԵՐՁ

ԱՐԺԵՔՆԵՐ, ՈՐ ԱՆԽԱԹԱՐ ԵՆ ՊԱՀՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԴԻՄԱԳԻԾԸ

…Մեկ ազգի պահողը, իրար միացնողը
լեզուն ա ու հավատը:
Լեզուդ փոխի՛ր, հավատդ ուրացի՛ր, էլ
ընչո՞վ կարես ասիլ, թե ո՞ր ազգիցն ես:
Խաչատուր Աբովյան

Աբովյանական այս ձևակերպմանը հավելենք նաև մշակույթը, որով էլ ամբողջանում է մեր ազգային դիմագիծը: Հենց մշակույթով է բնութագրվում ու առանձնանում ամեն մի ազգ: Կարծում եմ՝ մեղանչած չենք լինի ոչ ոքի դեմ, եթե խոստովանենք, որ հայ ազգը աշխարհի մասշտաբով շատ հարուստ մշակույթ է ունեցել, և օտարներն ավելի բարձր գնահատանքի խոսքերով են հաստատել դրա իրավացիությունը:

Դարերի ընթացքում բազմիցս ասպատակությունների ենթարկված Հայոց աշխարհը կանգուն է մնացել իր ավանդույթներով, մշակութային կոթողներով, նահիրյան արքայական լեզվով ու քրիստոնեական հավատով՝ հավերժորեն շարժելով վաչկատուն ցեղերի նախանձը:

Իրականությունն այն է, որ այսօր մենք կանք մեր գոյաբանական հիմնասյուների շնորհիվ:

Ներկա աշխարհի գլոբալիզացիայի ու աշխարհաքաղաքական մեծ փոփոխությունների պայմաններում մեր գերխնդիրն է՝ պահել-պահպանել ազգայինը, այսինքն՝ այն ամենը, ինչ կենդանի է պահում ազգը:

ՀՀ-ում գործում են կառույցներ, որոնց գերնպատակը հենց այդ գաղափարի հարատևությունն է հետապնդում: Նրանց գործունեության ուղնուծուծը կազմում է ազգային գաղափարախոսությունը, մատաղ սերնդի հիշողության մեջ ազգային դիմագիծը միշտ վառ պահելու միտումը:

Այդ կառույցներից մեկը «Արարատյան արժեքների կրթական հիմնադրամ»-ն է, որի համակիրների թիվն օր օրի ավելանում է, որովհետև չքաղաքականացված այս կազմակերպությունը նպատակ է հետապնդում՝ ազգային արժեքները դարձնել շատերի սեփականությունը: Նրա ձեռնարկած տարաբնույթ միջոցառումները, մրցույթները, կյանքի կոչված բոլոր ծրագրերը փաստում են նրա հետևողական պայքարի մասին՝ այդ արժեքները պահպանելու գործում:

Վերջերս Թեքեյան կենտրոնի ընդարձակ դահլիճում կայացած բազմաբովանդակ միջոցառման համար, թվում էր, դահլիճը շատ նեղ էր, քանզի հանդիսատեսի սրտին շատ մոտ ու հաճելի թեմաներ էին քննարկվում, ու մարդիկ ներկայացել էին՝ վայելելու կենսաթրթիռ այդ պահերը:

Տեղի էր ունենում հիմնադրամի՝ նախապես հայտարարած երկու՝ «Հայ ազգի առաքելությունը», «Իմ բանակը» խորագրերով ստեղծագործական մրցույթների մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունը, որ համընկնում էր մեր ժողովրդի փառապանծ զավակ Անդրանիկ զորավարի ծննդյան տոնին:

Միջացառմանը ներկա էին նաև Արցախի բարձրաստիճան պաշտոնյաներ, որովհետև մրցույթի մասնակիցների զգալի մասը Արցախից էր:

Հիմնադրամի գործադիր տնօրեն Աննա Չիլինգարյանը, ողջունելով ներկաներին, շեշտեց, որ իրենց կառույցի գործունեությունը բացառապես գաղափարախոսական է և բխում է «Արարատյան պետություն» գրքի պահանջներից, ու որդեգրել են այն գաղափարախոսությունը, որ ուժեղ պետություն ունենալու համար պիտի ունենալ ուժեղ արժեքներ՝ լեզուն, մշակույթը, պատմական հիշողությունը, ժառանգության պահպանությունը, հայրենիքի հանդեպ պատասխանատվությունը: Նման միջոցառումները բխում են հիմնադրամի գաղափարախոսությունից ու նրա գործունեությունից, և դրանք առաջին անգամ չեն կազմակերպվում («Արցախի վերադարձի ճանապարհը», «Իմ երկրի սահմանները»): Մրցույթներին մասնակցել են 100-ավոր մարդիկ՝ առանց տարիքային սահմանափակության, ու կազմակերպությանը հաջողվել է դրանցում վեր հանել շնորհալի երեխաների ու չափահասների: Մասնակիցներին հնարավորություն է տրվել ինքնարտահայտվելու՝ իրենց սերը առ հայրենիք դրսևորելու համար: Այդ միջոցառումները միաժամանակ նրանց համար մեծ հարթակ են նոր հնարավորությունների համար:

Օրվա առաջին մրցանակաբաշխությունը՝ «Հայ ազգի առաքելությունը» մրցույթի հետ էր կապված: Ունենալ ուժեղ պետություն, ուժեղ բանակ, կայուն տնտեսություն, ամուր սահմաններ. այս բոլոր արժեքները տեղ են գտել մասնակիցների ստեղծագործություններում, ինչն էլ շատ ուրախալի փաստ է: Այո՛, հայ ժողովուրդը, որտեղ էլ որ լինի՝ Սփյուռքում թե Հայրենիքում, եթե միասնական է և ունի ազգային տեսլական, միշտ էլ կարողանում է դիմակայել բոլոր տեսակի մարտահրավերներին:

Տնօրեն Աննա Չիլինգարյանը միաժամանակ նշեց, որ մասնագետների համար դժվար է եղել որոշում կայացնելը, որովհետև աշխատանքները մեկը մյուսից լավն էին:

Այնուհետև քահանա տեր Մխիթար Հարոյանը, շնորհակալություն հայտնելով հիմնադրամի տնօրենությանը՝ իրեն ևս այդ հրաշալի միջոցառմանը մասնակից դարձնելու համար, աղոթքով սկսեց իր խոսքը, օրհնեց ներկաներին ու հիշեց մեծ Հայդուկապետի խոսքը. «Թողեք, որ ես անհաշտ մնամ թուրքի հետ» (ինքը ևս նրա համակիրն է), կոչ արեց միասնական լինել ու սիրել հայրենիքը: Թող Անդրանիկի ոգին փոխանցվի մեր բոլոր սերունդներին, ու վառ մնա նրա պատգամը, որում ասվում է, որ եթե սերունդներն ուզում են իրեն նվեր մատուցել, ապա այնպես անեն, որ Առաքելոց վանքում հնչեն հայկական ծեսեր, կնունքներ ու հարսանիքներ:

Շնորհակալություն հայտնելով մեծարգո հյուրերին, որոնք ամեն պահի իրենց կողքին են ու հավատարիմ բարեկամներ են՝ հիմնադրամի խորհրդի նախագահ Նաիրի Հոխիկյանը համառոտ անդրադարձ կատարեց ազգային գաղափարախոսությանը՝ պետության ու ազգի անցնելիք ճանապարհին ու թվարկեց նրա բաղադրիչները.

- ազգային ինքնություն
- պետության տեսլական
- հայրենիքի նկատմամբ պատասխանատվություն և արժեքներ
- ազգային շահի առաջնահերթություն
- նպատակ և առաքելություն (ինչպիսին պիտի լինի Հայաստանը 10, 40, 100 տարի հետո):

Աշխարհում գոյություն ունի ժողովուրդների երկու տեսակ՝ արարող և գողացող: Մեր ժողովուրդն արարող է, իսկ թուրքը՝ գողացող: Եվ որպեսզի մեր ժողովուրդը հնարավորություն ունենա հանգիստ արարելու, անհրաժեշտ են անվտանգության երաշխիքներ, որ ստեղծում է միայն ուժեղ պետությունը: Իսկ թե որո՞նք են ազգային գաղափարախոսության հիմնասյուները, Նաիրի Հոխիկյանը ընդգծեց դրանց կարևորությունը:

ա/ Մովսես Խորենացի՝ մեր պատմահայրը, որ աշխարհին պարզեց մեր ինքնության երեք կարևոր հատկանիշները. ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս և դեպի ու՞ր ենք գնում:

բ/ Գրիգոր Նարեկացի՝ համաշխարհային նշանակության կերպար, որը 2015-ին հռչակվեց 36-րդ Տիեզերական վարդապետ ու սրբադասվեց:

գ/ Խրիմյան Հայրիկ, որ քրիստոնեությունը ավելի մոտեցրեց հայ ազգին: Ըստ նրա՝ հայ աղջիկը դեմքը բաց պիտի լինի ու կրթված: Այդ մասին նա հայտարարել է, երբ Վանում հանդիպել է փակ դեմքով հայուհիների:

դ/ Ռաֆֆի, որը հիմք դրեց մեր ազգային-ազատագրական պայքարին՝ ստեղծելով քաղաքական մտածողություն:

ե/ Անդրանիկ զորավար՝ արդար ուժեղի այն կրողը, որը կյանքում երբեք պարտություն չի կրել: Նա ազատագրել է Բուլղարիան, Պարսկաստանի հյուսիսային շրջանները, հասել մինչև Բերձոր…

զ/ Գարեգին Նժդեհ՝ մեր ժողովրդի նվիրյալ զավակ, որի հավատամքն էր՝ «Արժանի չես հայրենիքիդ, եթե այն չես դավանում իբրև գերագույն նպատակ, իսկ անձդ՝ իբրև միջոց»:

է/ Հովհաննես Թումանյան, որը մեր մշակույթը ժողովրդից քամեց-քամեց, հանեց ու հանձնեց թղթին:

ը/ «Սասնա ծռեր». էպոսը այն ազգային արժեքն է, որը լավագույնս ներկայացնում է մեր ժողովրդի դրական ու բացասական գծերը:

Այս ամենից ելնելով՝ մշակվել են ութ նպատակները՝ ուղենիշները.

1/ ազգային պետություն, որտեղ որոշողը էթնիկ ազգությունն է:

2/ հայրենաճանաչում

3/ քրիստոնեական արժեքներ (եկեղեցին է մեր պետականության պահպանողը)

4/ ազգային առաջադիմական կրթություն, այսինքն՝ քաղաքացիները լինեն ազգային մարդիկ, այլ ոչ թե գլոբալիստներ:

5/ նախաձեռնողականություն (բոլոր հարցերում լինել հարձակվող, ոչ թե պաշտպանվող, իսկ հարձակվել նշանակում է՝ տեր լինել իր ունեցածին)

6/ արդար ուժեղի սկզբունք, որը մեզ ավանդել է Անդրանիկ զորավարը:

7/ հայրենիքի ազատագրում գերությունից (Հյուսիսային Արցախ, Լեռնային Արցախ, Նախիջևան, Արևմտյան Հայաստան)

8/ գալիքի եռափուլ ճանապարհ (ինչպիսին պիտի լինի Հայաստանը 10 տարի հետո, 40 տարի հետո և 100 տարի հետո).

ա/ Գարդմանի և Արցախի վերադարձ, Արևմտյան Հայաստանի հայերի ազգային ինքնության հարց

բ/ հայկական բանակի վերազինում և հզորացում («Արարատյան արժեքների կրթական հիմնադրամը» տարիներ շարունակ իրականացնում է այդ գործընթացը)

գ/ Հայաստանն ապագայում:

Մրցանակաբաշխության ընթացքում մեկընդմեջ հնչում էին Մեծ զորավարի մարգարեական խոսքերը, պատգամները և լսվում երաժշտական համարներ՝ ազգային երգիչ Արսեն Գրիգորյանի (Մրո) և մասնակիցների կատարմամբ: Մրցանակակիրները պարգևատրվեցին հատուկ անվանակարգերով (մեր մեծերի անուններով), Գարեգին Նժդեհի «Բանտային գրառումներ» գրքով և հայրենաճանաչողական՝ «Ծովից ծով հայրենիք» խաղով, որը փոքրերին ու մեծերին սովորեցնում է ճանաչել Հայրենիքը՝ Տրապիզոնից մինչև Շուշի ու Պարտավ:

«Իմ բանակը» խորագրով մրցույթի հաղթողների մրցանակները սահմանված էին մեր անվանի ռազմական գործիչների անուններով: Նոր անվանակարգեր էին սահմանված նաև այսօր հարևան երկրի բանտերում անմարդկային պայմաններում հայտնված Արցախի ռազմաքաղաքական ղեկավարներ Ռուբեն Վարդանյանի, Լևոն Մնացականյանի և Դավիթ Բաբայանի անուններով:

«Արարատյան արժեքների կրթական հիմնադրամն» իրականացրել է մի շարք նախագծեր. ստեղծագործական մրցույթներ, հայրենաճանաչողական խաղեր, գունազարդման և գաղափարական տետրեր: Կազմել և տպագրել է Հայկազունիների թագավորական տոհմածառը, ինչպես նաև իրականացրել է հայրենաճանաչողական արշավներ: Հիմնադրամը կազմակերպել է «Հայոց Արևելից կողմեր, Գարդման. պատմություն և իրականություն» խորագրով խորհրդաժողով, որը նպատակ ուներ վեր հանել Գարդմանից բռնի տեղահանված հայերի իրավունքների և ունեցվածքի պաշտպանությունը ու քայլեր ձեռնարկել նրանց անվտանգ վերադարձի համար:

Առաջիկայում հիմնադրամը նախատեսում է «1604-ի առեղծվածը» խորագրով խորհրդաժողով և Ազգային կրթական կենտրոնների բացում Հայաստանի շուրջ 77 բնակավայրերում:

Օրվա միջոցառումն այնքան հետաքրքիր էր ու բովանդակալից, որ ավարտից հետո հանդիսատեսները չէին ուզում հեռանալ: Բոլորը ջերմ շնորհակալական խոսքեր էին հնչեցնում կազմակերպիչների հասցեին:

Ամեն ինչ՝ հանուն հայրենիքի ու ազգային ինքնության, հանուն ազգային վեհ արժեքների պահպանության ու երկրի հզորացման. այս գաղափարախոսությամբ են առաջնորդվում «Արարատյան արժեքների կրթական հիմնադրամի» բոլոր աշխատակիցները:

«Հայրենիքը չի տրվում այնպես, ինչպես ժառանգվում է հայրենական հարստությունը: Դա ձեռք է բերվում ամեն մի սերնդի և նրա առանձին անդամի կողմից. ձեռք է բերվում հայրենաճանաչումով, հայրենապաշտությամբ, նրան արժանի դառնալու ձգտումով: …Արժանի չես հայրենիքիդ, եթե այն չես դավանում իբրև գերագույն նպատակ, իսկ անձդ՝ իբրև միջոց»,- ասել է Գարեգին Նժդեհը:

Թող բոլորը հետևեն Նժդեհյան այս իմաստուն խոսքերին, այնժամ մեր հայրենիքը կլինի հզոր ու անպարտ:

Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՆՄԱՀ ՀԵՐՈՍՆԵՐ

ԽՈՍՏՈՒՄԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ

«Դևն իսկական առաջնորդ էր. ամեն ինչում առաջինն էր»
Կոմանդոս

Արցախի միավորումը Մայր հայրենիքին փորձվեց իրականացնել ԽՍՀՄ իշխանություններին նամակներ գրելով, սակայն երկար տարիների փորձն անցավ իզուր: 1988-ին սկսվեց Արցախյան շարժումը: Հավատում էինք՝ վերջապես մեր «հարազատ» Կենտկոմը, Գորբաչովը կիրականացնեն հայի երազանքը: Չեղավ, ընդհակառակը՝ Ադրբեջանի հայաշատ տարբեր վայրերում սկսվեցին հայության կոտորածներ: Ու արդեն ոտքի ելանք՝ զենքով ազատագրելու Հայոց երկիրը: Կազմավորվեցին առաջին զինվորական ջոկատները: Եղան նաև անհատներ, որոնք կարողացան իրենց շուրջը համախմբել հայրենասեր քաջորդիների, որոնց հետ էլ անցան ռազմի փառավոր ուղի: 1989-90թթ. արդեն կազմավորվել էին ՀԱԲ-ը, «Անկախության բանակ»-ը, որը հետագայում դարձավ «Ազատագրական բանակ», և որի հրամանատարը 1990թ. փետրվարից Լեոնիդ Ազգալդյանն էր, «Մեծն Տիգրան» աշխարհազորային գունդը, Բերդաձորի ինքնապաշտպանության խորհուրդը և այլն: Եվ նույն ռազմական կառույցների շատ մարտիկներ Գոյամարտի առաջին տարիներին հերոսաբար նահատակվեցին ու դարձան հերոսական կերպար՝ առաջնորդ իրենց մարտական ընկերներին, հետագա մարտիկներին: Այսօր ու հետագայում մեծ հպարտությամբ ենք հիշելու Մովսես Գորգիսյանին, Թաթուլ Կրպեյանին, Կարոտ Մկրտչյանին, Սիմոն Աչիգյոզյանին, Մուշեղ Մխոյանին, Ջիվան Աբրահամյանին, Տիգրան Սարգսյանին, Վարդան Բախշյանին... Նույն քաջորդիների շարքում է նաև Դավիթ Սարապյանը՝ Դևը:

Մարտի 18-ին «Մետրո» թատրոնում տեղի ունեցավ Արցախյան առաջին պատերազմի լեգենդար հերոս, գրող, կինոգործիչ Դավիթ Սարապյանի՝ Դևի 60-ամյակին նվիրված հանդիսավոր երեկո, որը կազմակերպել էր «Դավիթ Սարապյան» նախաձեռնությունը: Ներկա էին հերոսի մարտական ու մանկության ընկերներ, Դավիթ Սարապյանի անունը կրող թիվ 100 և նրա հարազատ՝ Ջոն Կիրակոսյանի անվան (նախկին Ջերժինսկի) թիվ 20 դպրոցի ուսուցիչներ, աշակերտներ, նրա սխրանքը գնահատողներ, մտավորականներ, հյուրեր:

Երեկոն վարեց ճանաչված դերասան Արսեն Ղազարյանը: Բացման խոսքը Մովսես վարդապետ Սարգսյանն սկսեց Տերունական աղոթքով: «Դավիթը դեռ պատանեկությունից գիտեր՝ հայրենիքին ծառայելը սոսկ պարտականություն չէ, այլև աստվածային շնորհ ու նվիրում: Նա զոհվել է ոչ միայն ինձ համար, այլև իմ փոխարեն: Եթե մեկը կյանք է փրկում, փրկվածը միշտ երախտապարտ է փրկողին: Ուրեմն մենք էլ երախտապարտ ենք նրանց, ովքեր իրենց կյանքը տվեցին մեզ համար ու մահացան մեր փոխարեն: Որպեսզի Դավիթ Սարապյանի կերպարն ապրի մեր սերունդների մեջ, հակառակ բոլոր հակասություններին, պետք է սիրենք մեր հայրենիքը, սիրենք մեր եկեղեցին, պահենք մեր հավատն ու ազգային արժեքները», - իր խոսքում նշեց հոգևոր հայրը:

Ընթացքում եղան ելույթներ հերոսի ուսուցիչների, մարտական ընկերների, կենսագիրների կողմից: Հնչեց դպրոցի օրհներգը՝ Մերի Կարապետյանի խոսքերով, երիտասարդ երգահան Արման Ամալյանի երաժշտությամբ:

Արցախի սուրբ հողում,
Կարինի երազը սրտում՝
Ուխտեցիր Երկիր կերտել
Արևի տակ կանգուն:
Մենք քո սաներն ենք, Դավի՛թ,
Նույն երազը սրտում,
Քո պատգամն ենք կրելու
Մեր ուղիներում:
Մենք քո գործն ենք, Դավի՛թ,
Տանելու առաջ՝
Մի բռունցք դարձած
Մեր վճիռներում:

Ցուցադրվեցին նաև հատվածներ Ցվետանա Պասկալևայի նկարահանած «Նվիրյաները»՝ Դևի մասին ֆիլմից: Ներկայացվեց նաև հերոսի գրական ժառանգությունը: Էկրանից հնչեցին Արկադի Տեր-Թադևոսյանի՝ Կոմանդոսի, ՀԱԵ Արցախի թեմի նախկին առաջնորդ Պարգև սրբազանի, նվիրյալ հայ ու ազգային գործիչ, Լ. Ազգալդյանի զինվոր Գագիկ Գինոսյանի գնահատանքի խոսքերը Դավիթ Սարապյանի մասին: «Դավիթ Սարապյանը մեր հաղթանակի սյուներից է, մեր ազգի տաճարի անկյունաքարերից մեկը: Դեռ կարող էր շատ հաղթանակների հասնել, շատ բարձունքներ նվաճել, բայց, ավա՜ղ: Նրա հերոսական մահն ավելի բարձրացրեց Դավիթի լուսավոր կերպարը, որ կրում եմ իմ մեջ…», -ասել է Պարգև սրբազանը: Կոմանդոսը Դավիթի մասին ասել է. «Դավիթն արտակարգ անձնավորություն էր, արիության ու բարոյականության չափանիշ: Դևն իմ ամենալավ հրամանատարն էր: Նա օժտված էր ռազմական բնատուր տաղանդով և գերազանց էր ամեն ինչում. կատարելապես տիրապետում էր զենքին, մշակում էր ռազմավարական գործողությունների պլանները և ինքն էլ դրանք փայլուն կերպով իրագործում...»: Ֆիլմում Արցախի թեմի սպասավոր, Գանձասարի վանքի հոգևոր հովիվ, երջանկահիշատակ Արժանապատիվ Տ. Գրիգոր քահանա Մարկոսյանը Դևի մասին ասում է. «Դավիթի հետ հաճախ էի հանդիպում: Նա շատ մաքուր տղա էր: Նրա արյան մեջ էր մաքրությունը, նաև հերոսությունը: Նա ի ծնե ազնվական էր, մտավորական...»:

Երեկոյին համահունչ երգերով հանդես եկան երգիչներ Շուշան Պետրոսյանը, Անմահ հերոս Վարդան Ամալյանի ծնողները՝ Արմինե և Դավիթ Ամալյանները, Արսեն Գրիգորյանը: Շ. Պետրոսյանի հնչեցրած «Արցախ» երգը շատերին ստիպեց արտասվել:

Ջոն Կիրակոսյանի անվան դպրոցի տնօրեն Քրիստինե Դումանյանը ներկայացրեց Դավիթին, որը եղել է բազմաշնորհ դպրոցական: Նույն դպրոցի սաների ելույթները Դավիթի կյանքի և ստեղծագործության յուրովի հնչող գնահատականներ էին: Երեխաները հանդիսատեսին հուզեցին հատկապես Դավիթի բանաստեղծությունների ինքնատիպ մեկնություններով: Մեր ժողովրդի կողմից սիրված «Թռչեի մտքով տուն» երգը հնչեց դպրոցական Դենիս Վարդանյանի կողմից և ընդունվեց ոգևորությամբ: «Մայրիկ» երգի հիանալի կատարումով հանդես եկավ նաև դպրոցի շրջանավարտ, ԵՊՀ ուսանողուհի Էլեոնորա Հարությունյանը: Դավիթի մասին խոսք ասաց նաև դերասան Գոռ Գրիգորյան-Գլումովը: Դավիթի կենսագիր Էվելինա Մելքումյանն իր խոսքում ասաց. «Դավիթի հիշատակը վառ պահելու, նրա թողած գրական ժառանգությունը հայալեզու ընթերցողներին ևս ներկայացնելու նպատակով 2019թ. հրատարակվեց իմ հեղինակած «Մեր օրերի Դավիթը» հայերեն նոր գիրքը: Նույն թվին լույս տեսավ նաև երկրորդ գիրքը, որը ռուսերեն բնագրից հայերեն թարգմանությամբ ներկայացնում է Դավիթ Սարապյանի գրական ստեղծագործությունները՝ «Երեք հարյուր վայրկյան» կինոսցենար-վիպակը, պատմվածքներ և համակարգչային խաղի համար գրված «Վարազդատ արքա» սցենարը: Այն ռուսերենից հայերեն է թարգմանել և մասնագիտական նախաբանով ընթերցողին ներկայացրել գրականագետ Մերի Կարապետյանը»:

1996 թ. Ջոն Կիրակոսյանի անվան դպրոցում բացվել է Դավիթ Սարապյանին նվիրված դասարան և թանգարան: Այս գործում մեծ է մանկավարժների դերը, որոնցից հիշատակելի են դպրոցի այն ժամանակվա տնօրեն, երջանկահիշատակ Նարինե Հովհաննիսյանի, Դավիթ Սարապյանի աշակերտական տարիների դասղեկ, ապա՝ նրա անունով հետմահու անվանակոչված դասարանի առաջին դասղեկ Ռիմա Դանիելյանի, նախկին տնօրեն Անահիտ Խոսրովյանի, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ռիմա Կարապետյանի, դպրոցի հատուկ մանկավարժ, նախկին փոխտնօրեն Արմինե Բաբայանի, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Իզաբելա Աբրահամյանի անունները: Նրանց երախտալի գործն այսօր շարունակում են Ջոն Կիրակոսյանի անվան դպրոցի ներկայիս տնօրեն Քրիստինե Դումանյանը և Դավիթ Սարապյանի անվան դասարանի դասղեկ Տաթևիկ Սևոյանը:

Երեկոն ամփոփեց «Հայ Ձմեռ պապ» բարեգործական հիմնադրամի տնօրեն Արմինե Պետրոսյանը. «Մեր նախաձեռնությունը մեծապես կարևորում է երիտասարդների հետ աշխատանքը: Դավիթի սովորած թիվ 20 դպրոցը 1990-ականներից հաստատված ավանդույթներ ունի: Բայց մենք երազում էինք նաև նրա անվանակիր դպրոցի մասին: 2019-ին Կոմիտասի թանգարան-ինստիտուտում կայացած գրքերի շնորհանդեսի ժամանակ մենք դիմեցինք միջոցառմանը ներկա, այն ժամանակ ԱԺ պատգամավոր Սոֆյա Հովսեփյանին՝ առաջարկելով դիտարկել Երևանի դպրոցներից մեկը Դավիթ Սարապյանի անունով անվանակոչելու հարցը»: 2020թ. սկզբից եղավ Քովիդը, այնուհետև 44-օրյա պատերազմը, այլ դժվարություններ: Բայց Սոֆյա Հովսեփյանի, էռնեստ Ավանեսովի, նախաձեռնության մյուս անդամների և թիվ 100 դպրոցի տնօրեն Անուշ Աբելյանի համատեղ ջանքով Դավիթ Սարապյանի անվան դպրոց ունենալու իղձը 2021թ. իրականություն դարձավ: Ավելին՝ արդեն Դավիթ Սարապյանի անունը կրող դպրոցի և «Մեծն Տիգրան» ջոկատի համատեղ ուժերով մարմին առավ ևս մեկ երազանք՝ դպրոցի բակում տեղադրվեց հերոսի կիսանդրին, որի քանդակագործը նրա մարտական ընկեր, ազատամարտիկ Աղվան Մխիթարյանն է:

Դավիթ Սարապյանը ծնվել է Երևանում 1966թ. փետրվարի 4-ին: Հայրը՝ Էդուարդ Սարապյանը, Երևանի գլխավոր ճարտարապետն էր, մայրը՝ Էմմա Սարապյանը, ականավոր գիտնական: 1984թ. մայիսին Դավիթը զորակոչվել է խորհրդային բանակ, ծառայել Բայկոնուրի զորամասում, ապա՝ Խմելնիցկու մարզում: 1985թ. հոկտեմբերին նրան դատապարտել են 4 տարվա ազատազրկման՝ ազգամիջյան կոնֆլիկտի համար: Բանտից դուրս գալուց հետո աշխատել է որպես ռեժիսոր, գրել «300 վայրկյան» վիպակը: Արցախյան գոյամարտի առաջին մասնակիցներից է՝ Լեոնիդ Ազգալդյանի հոգեզավակը: Ֆիզիկոս, սակայն ճանաչված հրամանատար Լեոնիդ Ազգալդյանը եղել է Դավիթի ծնողների ընկերներից, մանկուց ճանաչել է Դավիթին, սովորեցրել լողալ, մարզվել, տվել է խորհուրդներ: Քաջորդին սկզբում ծառայել է Լեոնիդ Ազգալդյանի «Անկախության բանակի» շարքերում, ապա միացել «Մեծն Տիգրան» աշխարհազորային գնդին: Հերոսաբար զոհվել է 1991թ. դեկտեմբերի 10-ին Շահումյանի շրջանի Թոդան գյուղի համար մղվող մարտում:

Մոնթեն նույնպես ճանաչել է Դավթին, եղել են մտերիմ և նրա մասին գրել է. «Ես նրան շատ սիրեցի: Դավիթը միշտ մտքիս մեջ է, և ես համոզված եմ, որ եթե յուրաքանչյուր ազատամարտիկ ունենա գոնե մեկ տոկոս Դավիթի հայրենասիրությունից, մենք շատ շուտով կազատագրենք Արևմտյան Հայաստանը»:

Դև մականունը նրան տվել է մարտական ընկեր Սեյրան Գրիգորյանը՝ տեսնելով ընկերոջ չափազանց անվախ ու դիվային զորությունը: Մինչև հերոսական նահատակությունը, Դևը բազում քաջագործություններ է կատարել, հաճախ՝ միայնակ: Այս առումով նշանավոր է Արցախի Դիզակի երբեմնի մելիքանիստ Տող գյուղի ազատագրումը: Խորհրդային տարիներին գյուղում նաև ադրբեջանցիներ էին բնակվում, և նրանց անվտանգությունն ապահովելու համար գյուղ էին բերել խորհրդային զինվորների ու ադրբեջանական ՕՄՕՆ-ականների, որոնք միասին մեծ աղետ էին հայության համար: Տողը եղել է Դավիթի մոր ծննդավայրը, այստեղ էր պապի տունը, և նա մանկության տարիներին շատ էր եղել գյուղում, ծանոթ էր շատերի հետ: 1991թ. հոկտեմբերի 17-ին թուրք ՕՄՕՆ-ականները գնդակահարել էին գյուղի Դանիելյանների ընտանիքի 5 անդամի: Այդ օրերին Կոմանդոսի գլխավորությամբ իրականացվում է Տողի ազատագրումը: Սկզբում Դավիթը միայնակ մոտեցել էր այն շենքին, որտեղ ՕՄՕՆ-ականները քեֆ էին արել: Նախ անխոս վերացրել էր 2 ժամապահի: Ապա կանչել էր նրանց հրամանատարին ու մոտի նռնակներով լի պայուսակը նետել նրա կողմը՝ ռուսերեն ասելով՝ բռնիր: Թուրքը բռնել էր պայուսակը, և հզոր պայթյունից տունը փլվել էր, իսկ ներսում եղած ասկյարները մնացել էին փլատակների տակ: Նույն օրը պայթեցրել էր մեկ այլ տուն ևս, որը թուրքերը կառուցել էին հայոց գերեզմանոցի տապանաքարերով: Եվ դրանից հետո սկսվում է մեր տղերքի հարձակումը: 1991թ. հոկտեմբերի 30-ին Տողը մաքրվում է թուրքերից: Այդ հերոսությունից հետո վերադառնում է Երևան և հպարտորեն մորն ասում. «Քո հարազատ գյուղն ազատագրված է, հիմա էլ պետք է ազատագրենք հայրիկի հարազատ քաղաքը՝ Էրզրումը»: Մայրը համբուրել է որդուն՝ ասելով դու իսկական Դանիել Բեկի և Պողոս Բեկի թոռն ես... Այսպիսին է եղել Դավիթը, որին նրա մարտական ընկեր ու մտերիմ, ազգային հերոս Ջիվան Աբրահամյանը համեմատել է Դավիթ Բեկի հետ: Ինչպես Լեոնիդ Ազգալդյանն էր ասում, որ ինքը կընկնի Ստամբուլի պատերի տակ, բայց նահատակվեց Տոնաշենում՝ թաքստոցից հնչած կրակոցից, այդպես էլ Դևն ընկավ Թոդանն ազատագրելուց հետո թաքնված թուրքի կրակոցից 1991թ. դեկտեմբերի 10-ին: Այս առթիվ Գագիկ Գինոսյանը Դևի մասին ասում է. «...Վստահ եմ, որ նա կազատագրեր ոչ միայն Կարինը(Էրզրումը), եթե նրա տեսակն այդքան հանդուգն ու խենթ չլիներ...»: Նույն օրը նահատակվեցին նաև նրա մարտական ընկերներ Համլետ Մինասյանը, Կամո Հովհաննիսյանը, Մերուժան Սարգսյանը և Արայիկ Գյոլեցյանը: Եռաբլուրում է Դևը հուղարկավորված՝ հավերժ մնալով 26 տարեկան և փառապանծ հերոս:

Ջոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

ՀԱՅ ՎՐԻԺԱՌՈՒՆԵՐ

ՆԱ ՄԱՐԴԱՍՊԱՆ ՉԷՐ

Ազգային պարծանք, հպարտություն, հերոս ու ազգի պատիվ պահող կերպար է Սողոմոն Թեհլերյանը՝ 105 տարի առաջ իրականացրած գործողությամբ: Հայոց Մեծ եղեռնից հետո երիտթուրքերից շատերը, որոնք նախաձեռնել էին ու իրականացրին մեծ ոճիրը, փախել էին Թուրքիայից: 1919թ. գումարվեց Թուրքիայի զինվորական դատարանի նիստ, և հեռակա մահվան դատապարտվեցին Հայոց Ցեղասպանության գլխավոր կազմակերպիչները, բայց... Պարզ է՝ ձևականություն էր հեռակա դատավարությունը, և դատարանի վճիռը պետք է կատարվեր ցեղասպանված ժողովրդի զավակների կողմից: Հայ Հեղափոխական Դաշնակցությունը կազմակերպեց «Նեմեսիս», գործողությունը՝ հունական Նեմեսիս-վրեժխնդրության աստվածուհու անունով: 1921թ. մարտի 15-ին Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինի Շառլոտենբուրգ թաղամասի Հարդենբերգ փողոցում Սողոմոն Թեհլերյանն իրականացրեց «Նեմեսիս»-ի հերթական դատավճիռը՝ գնդակահարեց երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխներից՝ 1913-1918 թթ. Օսմանյան Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթին: Նույն վայրում էլ ձերբակալվում է Սողոմոնը, սակայն 1921թ. հունիսի 2-ին գերմանական դատարանն արդարացնում է նրան: Թեհլերյանին պաշտպանել են դոկտոր Թեոդոր Նիմայերն՝ օրենսդրության պրոֆեսոր Քիլի համալսարանից, Ադոլֆ ֆոն Գորդոնը՝ իրավական գաղտնի խորհրդական և Յոհաննես Վերթաուերը՝ իրավական խորհրդական: Շահան Նաթալին հրահանգել էր Սողոմոնին. «Կպայթեցնես գանգը թիվ մեկ ազգասպանին և չես փորձի փախչիլ, կկանգնիս տեղդ ոտքդ սատակին վրա ու կհանձնվիս ոստիկաններուն, որոնք կգան ու կձերբակալեն քեզ»:

Դատի ժամանակ դատարանի նախագահը Սողոմոնին հարցրել է. «Դուք Ձեզ ինչո՞ւ հանցավոր չեք համարում, Թեհլերյանը պատասխանել է. «Ես ինձ հանցավոր չեմ համարում, որովհետև խիղճս հանգիստ է... Դեպքից մոտ երկու շաբաթ առաջ ինձ շատ վատ էի զգում, ջարդերի պատկերներն աչքերիս առաջ էին: Մորս դիակը տեսա: Այդ դիակը ոտքի ելավ, կանգնեց առջևս և ասաց ինձ՝ դու տեսար, որ Թալեաթն այստեղ է, ու անտարբե՞ր ես մնում: Հանկարծ արթնացա և որոշեցի այդ մարդուն սպանել»:

Այս հերոսական գործողության 105-ամյակի առթիվ Երևանում՝ Աջափնյակ թաղամասում, որտեղ կանգուն է Թեհլերյանի կիսանդրին, կայացավ ծաղիկների խոնարհում ու ոգեկոչում:

Սողոմոն Թեհլերյանը ծնվել է 1896թ. Արևմտյան Հայաստանի Երզնկայի գավառի Բագառիճ բնակավայրում: Ծննդավայրում ստացել է նախնական կրթությունը, ապա ուսումը շարունակել Երզնկայի Կեդրոնական ուսումնարանում: 1912թ. ավարտել է ուսումը, մեկ տարի անց տեղափոխվել է Սերբիա: Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուն պես վերադարձել է Հայաստան, մասնակցել կամավորական շարժմանը՝ Անդրանիկի գնդում: 1915թ. նրա ընտանիքը նույնպես ենթարկվել է ցեղասպանության:

Հուշակոթողի մոտ այցելեցին, ծաղկեպսակ դրեցին ու ծաղիկներ խոնարհեցին նաև ՀՅԴ Հայաստանի երիտասարդական միության անդամները: Պ.գ.դ., պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանն անդրադարձավ այդ գործողության պատմությանը՝ ասելով. «Սողոմոն Թեհլերյանն իրականացրեց հայ ժողովրդի պատիվը փրկելու մի գործողություն, որին բոլորն սպասում էին: Դրանից առաջ թուրքական պետությունը նախաձեռնել էր զավեշտալի մի ծրագիր՝ հայ ժողովրդին բնաջնջել իր հայրենիքում: Եվ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայ ժողովուրդը չկարողացավ պատշաճ դիմադրություն ցույց տալ...»: Թուրքիայից դուրս տարբեր երկրներում իրենց հանգիստը վայելող թուրք դահիճներին պատժելու գործողության կատարման որոշումը կայացվել է 1919թ. Երևանում՝ Հայ Հեղափոխական Դաշնակցության IX ընդհանուր ժողովում: Մասնավորապես, որոշում է ընդունվել ի կատար ածել երիտթուրք («Միություն և Առաջադիմություն» կուսակցություն) պարագլուխների նկատմամբ դատավճիռը: Նշվել է Ցեղասպանության հանցագործների 650 անուն, որոնցից առանձնացվել են 41 գլխավոր հանցագործները: Թալեաթի անունը ցանկում առաջին համարի տակ էր գտնվում: «Նեմեսիս» գործողությունն իրականացնելու համար ստեղծված պատասխանատու մարմինը ղեկավարել են ԱՄՆ-ում Հայաստանի ներկայացուցիչ Արմեն Գարոն և հատուկ Ֆոնդի ղեկավար Ահարոն Սաչագլյանը: Գործողության օպերատիվ ղեկավարությունն ու նյութական ապահովումն իրագործում էին Շահան Նաթալին և Գրիգոր Մերջանովը: Խ. Ստեփանյանը նշեց նաև. «Սողոմոնը միակն էր, որ փրկվել էր Եղեռնին զոհ գնացած իր ընտանիքից և իր կատարած ակտով փրկեց ոչ միայն իր ընտանիքի, այլև հայ ժողովրդի հավաքական վրեժը..., նա փրկել է հայ ժողովրդի հավաքական պատիվը»: Այս առումով տեղին է հիշել նաև հայ ժողովրդի բարեկամ, գերմանացի գրող և հասարակական գործիչ Արմին Թեոֆիլ Վեգների խոսքը. «Այդ պահին, երբ ամբաստանյալը (Սողոմոն Թեհլերյանը) փողոց իջավ և ատրճանակն ուղղեց իր զոհի դեմ ..., այդ ինքը չէր, որ փողոց էր իջնում, նրա միջով իջնում էին դարերը, միլիոնավոր սպանվածները: Կարելի է ասել, որ նա իր առջևից տանում էր իր ամբողջ ժողովրդի պատվի դրոշը, դրոշը խոշտանգվածների, դրոշն իր սպանված ընտանիքի ...»:

ՀՅԴ Երևանի քաղաքային կոմիտեի երիտասարդ ներկայացուցիչը 105 տարի առաջ իրականացված գործողության առթիվ ասաց. «Սողոմոն Թեհլերյանի ամենակարևոր դասը իր քայլով և առհասարակ «Նեմեսիս» գործողությունն այն են, որ ցույց տրվեց աշխարհին ու Թուրքիային՝ մեր թշնամուն, հայ ժողովրդի պայքարի ոգին չի մահացել»:

Ռազմական կինոռեժիսոր Սամվել Թադևոսյանն իր խոսքում կարևորեց այն, որ Սողոմոն Թեհլերյանի խորհուրդը հավերժական է: Անդրադառնալով Ս. Թեհլերյանի կերպարին մշակույթում՝ ասաց. «Վերջերս ավարտել եմ «Նեմեսիսը մշակույթում» ֆիլմը, որը խորհրդանշում է Նեմեսիսը երեկ, այսօր և վաղը: «Ազգային արժանապատվություն ասպետներին». աղբյուր-հուշակոթողի վրա գրված են վրիժառուների անունները: Կան նաև սյուներ, որոնց վրա անուններ չկան: Դա վաղվա և այսօրվա շնորհալիների համար է թողնված: Մշակույթը նույնպես զենքի տեսակ է: Շատ են դեպքերը, որ արվեստի մի խոշոր գործ հավասար է դիվանագիտական մի ամբողջ խմբի արածի»:

Զրույցների ընթացքում անդրադարձ եղավ նաև «Նեմեսիս»-ի այլ քաջամարտիկների: Ս. Թեհլերյանը վախճանվել է 1960թ. մայիսի 23-ին ԱՄՆ Սան Ֆրանցիսկո քաղաքում:

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՍՊԵՏՆԵՐԻ ՈԳՈՎ

«Կան դատեր, որոնց վճիռները չպետք է վստահել դատարաններին»
Սողոմոն Թեհլիրյան

Հայոց Մեծ եղեռնից հետո եղան մի շարք վրեժառման գործողություններ, որոնց իրականացողները, հիրավի, Ազգային արժանապատվության ասպետներ են: «Նեմեսիս» ծրագրով իրագործվեցին Մեծ եղեռնի կազմակերպիչ ու սպանդներ իրականացնող դահիճների սպանություններ աշխարհի տարբեր վայրերում, և սա խոսում է այն մասին, որ գալու է նաև չարի հատուցման պահը: 105 տարի առաջ մարտի տասնհինգին Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինի Շառլոտենբուրգ թաղամասի Հայդենբուրգ փողոցում 25-ամյա Սողոմոն Թեհլերյանն սպանեց Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից մեկին՝ ամենամեծ դահիճ Թալեաթին: Իրականացրեց հայ ժողովրդի պատիվը փրկելու մի գործողություն, որին բոլորը սպասում էին: Այս գործողության առթիվ մարտի 16-ին Երևանում՝ «Ազգային արժանապատվության ասպետներ» հուշակոթող-աղբյուրի մոտ տեղի ունեցավ ծաղիկների խոնարհում: Միջոցառումը կազմակերպել էր Համահայկական

Հասարակական Դաշինքը(ՀՀԴ): Հուշարձանի մոտ «Նեմեսիս» ծրագրի մասին խոսեց ՀՀԴ համահիմնադիր Թաթուլ Մանասերյանը: Ասաց՝ «Նեմեսիս» գործողությունը պատվաբեր առիթ էր հայորդիների համար: Թալեաթին սպանելու համար վիճակահանությամբ ընտրվել է Սողոմոնը: Իհարկե, նույն ցուցակում եղել են այլք, բայց, ինչպես երգում է հնչում՝ «Թեհլիերյանի բախտը բացվեց...»: Թ. Մանասերյանը կարևորեց այն, որ 105 տարի անց էլ չմոռանանք այս հերոսների մասին, որոնք իրականացրին նման գործողություններ:

Միջոցառմանը ներկա էին նաև այլ կառույցների ներկայացուցիչներ, որոնք համագործակցում են ՀՀԴ-ի հետ: Հուշակոթողի վրա գրված է բոլոր վրիժառուների, այդ թվում՝ 1894թ. ծնված Արտաշես Գևորգյանի անունը: Նա 1922թ. հուլիսի 21-ին Թիֆլիսում ընկերների՝ Պետրոս Տեր-Պետրոսյանի և Ստեփան Ծաղիկյանի հետ սպանել է Օսմանյան կայսրության ռազմածովային նախարար, Մեծ եղեռնի գլխավոր հանցագործներից մեկին՝ Ջեմալ փաշային: Ստալինյան բռնատիրության տարիներին ձերբակալվում է նաև Արտաշեսը և 1937թ. օգոստոսի 14-ին գնդակահարվում Ջեմալին սպանելու մեղադրանքով: Ինչ խոսք, դաժան է, Գերմանիայում ճիշտ գնահատեցին Թեհլերյանի գործողությունը և ճանաչեցին անմեղ, իսկ հայրենիքում գնդակահարեցին Հայոց դահիճին սպանողին: Իհարկե, հետագայում արդարացվեց Արտաշեսը, բայց...

ՀՀԴ կառույցի հետ համագործակցող անհատներից է նաև Արտաշեսի թոռը՝ Արմեն Գևորգյանը, որն իր խոսքում շնորհավորեց ներկաներին մարտի 15-ի առթիվ: Ասաց. «Աշխարհում 3 կարևոր բան կա՝ Արժանապատվություն, Պատժի անխուսափելիություն և Արդարադատություն: Ոչ մեկը չի կարող այդ երևույթներից խուսափել...»: Անդրադարձավ նաև Թալեաթի դիվային որոշումներին՝ ոչնչացնել նաև հայ երեխաներին: Այսինքն՝ աշխարհը գործ ուներ համամարդկային դահիճ-հանցագործի հետ, որը եղել է Թուրքիայի կառավարության անդամ՝ ներքին գործերի նախարարը:

Միջոցառմանը ներկա էին իրավապաշտպան Լարիսա Ալավերդյանը, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի նախկին դեկան Գուրգեն Մելիքյանը, նախկին զինվորականներ, քաղաքական գործիչներ:

Զոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

ՍՏԵՂԾԱԿԱՆ

ԲԱԶՄԱՏԱՂԱՆԴ ԱՐՑԱԽՅԻՆ ՉԻ ԹԵՎԱԹԱՓՎՈՒՄ

Արցախի հոգեւոր կենտրոն եւ քրիստոնեական սրբավայր՝ Գանձասար այցելած շատ-շատերը տեսել են Վանք գյուղի մոտակայքում գտնվող հայտնի քարե առյուծը, որը փորագրված է անմիջապես ժայռի մեջ: Քարե առյուծի հեղինակը Արամ Ավագյանն է, որի մասին պատմելու համար մեկ հոդվածը թերեւս չբավականացնի, բայց նրա հայրենասեր ու բազմատաղանդ էությանը մեր ընթերցողներին ծանոթացնելու հնարավորությունը բաց չենք թողնի:

Ծնվել է Ստեփանակերտում 1967թ. հուլիսի 8-ին: Վաղ մանկությունն անցել է Ասկերանի շրջանի Ռեւ գյուղում՝ տատի մոտ, որտեղ էլ նա սովորել է սիրել իր երկիրը, գնահատել Արցախի գեղեցկությունը: Սովորել է Ստեփանակերտի հ.10 միջնակարգ դպրոցում: Նա հեշտությամբ էր յուրացնում բոլոր առարկաները, բայց ամենից շատ սիրում էր ստեղծագործել, թղթի վրա կամ քանդակներով արտացոլել իր երկրի գեղեցկությունը: Նաեւ հիանալի մարզիկ էր: Դպրոցական տարիներին պարապել է թեթեւ աթլետիկա, մասնակցել է մրցաշարերի եւ հաղթել: Հետագայում ավագ եղբորից կարատե մարտարվեստ է սովորել եւ վարպետացել մարտարվեստներում: Ձեռնամարտում էլ ուժեղ էր:

Ինչպես նրա հասակակից շատ տղաներ, Արամը հասկանում էր, որ պետք է ինքն իրեն մարտիկ դաստիարակի՝ իր եւ Արցախի պաշտպան: Մասնակցեց «Զարնիցա» եւ «Օրլյոնոկ» մանկապատանեկան ռազմամարզական խաղերի: Նրա թիմը՝ շնորհիվ Արամի, ուժի, ճարպկության, սպորտային վարպետության դարձավ ուժեղագույնը տարածաշրջանում: 1985 թվականին Արամը զորակոչվեց խորհրդային բանակ: Հենց այստեղ նրան առաջին անգամ վիճակվեց բացատրել մարդկանց, որ Արցախը հայկական հող է: Նա տեսնում էր ու հասկանում, որ Արցախը չէր կարող մնալ Ադրբեջանի կազմում: 1987-ին Արամը վերադարձավ Ստեփանակերտ: Նա ցանկանում էր ստեղծագործել եւ ընտրեց լուսանկարչի մասնագիտությունը: Բուհ ընդունվեց, սակայն արդեն մեկ տարի անց՝ 88-ին հասկացավ, որ իրեն այլ ճանապարհ է սպասվում՝ պայքար հանուն Արցախի ազատության: Իր կողմից բացված նկարչատան գործունեությունը ստիպված է լինում դադարեցնել, երբ սկսվում է 88-ի շարժումը:

Ինքնապաշտպանության առաջին ջոկատներից մեկի հրամանատար, «Ուրագան» ջոկատի եւ 10-րդ վաշտի մարտիկ, ԿՊՇ հետախույզ, ձեռնամարտի վարպետ եւ հատուկ ստորաբաժանումների հրահանգիչ Արամ Ավագյանին շատերը ճանաչում են որպես հայրենասեր եւ քաջարի մարտիկի, որը մասնակցել է Արցախի պաշտպանության համար մղված բոլոր պատերազմներին եւ քաջաբար պայքարել հայրենիքի ազատության համար: Արամ Ավագյանը աշխարհազորի հիմնադիրն ու հրամանատարն էր: Հայրենիքին մատուցած բացառիկ ծառայության համար պարգեւատրվել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով, «Դրաստամատ Կանայան» եւ «Արիության համար» մեդալներով:

Ինչպես բոլոր արցախցիները, Արամ Ավագյանը նույնպես վերապրել է Արցախի շրջափակումը, 2023 թվականին ստիպված թողել իր տունը, ծննդավայրը, գերեզմանները, իր բազմամյա աշխատանքը եւ ամենաթանկ հիշողությունները:

Արամ Ավագյանը պատմում է Արցախի, իր ընկերների եւ գործընկերների, իրականացված եւ չիրականացված երազանքների մասին, Ասկերանի շրջանի իր հայրենի Ռեւ գյուղը էկոտուրիզմի, հայտնի ղարաբաղյան ցեղատեսակի ձիերի բուծման կենտրոնի վերածելու իր գաղափարի մասին:

Արամն ամաչում է իր նախնիների գերեզմանները լքելու համար, բայց իր երեխաների եւ թոռների կյանքը փրկելու համար նա ստիպված է եղել հեռանալ, ինչպես ամբողջ Արցախի բնակչությունը: Արցախը լքել է իր մեքենայով՝ ընտանիքի հետ: Իր հետ վերցրել է ընտանեկան ալբոմներն ու լուսանկարները, բայց բոլոր մրցանակները թողել տանը:

Բռնատեղահանվելուց հետո նա տեղափոխվել է Հայաստան, ներկայում ապրում է Շիրակում՝ Գյումրիում, որտեղ շարունակում է ստեղծագործել՝ երբեք չկորցնելով կապը անցյալի հետ:



Տարբեր արհեստների տիրապետող Արամի ձեռքով ամեն ինչ գալիս է, ինչպես ասում են ժողովրդի լեզվով: Նա կարողանում է գեղեցկություն գտնել բազմազան նյութերի մեջ եւ իր գաղափարները կյանքի կոչել: Նա ստեղծում է ձիերի արձանիկներ: Դա երկար եւ աշխատատար գործընթաց է: Սկզբում նա ֆիգուրները ձուլում է պլաստիլինից, ապա դրանք տեղափոխում է կարծր նյութերի վրա՝ բրոնզ, ձուլածո մարմար, կերամիկա եւ այլն: Նրա նրբագեղ ձիերը շարժման մեջ են: Յուրաքանչյուր մանրուք՝ սկսած ծածանվող բաշից մինչեւ ուժեղ, մկանուտ ոտքերը, պատրաստում է սիրով եւ ուշադրությամբ:

Արցախում նրա տաղանդավոր ձիրքն արտահայտված էր նկարչության, քանդակագործության, դիզայնի, եւ հիպոթերապիայի ոլորտներում: Գեղեցկության հանդեպ նրա կիրքը դրսեւորվեց լանդշաֆտային դիզայնի եւ ճարտարապետության ուսումնասիրության մեջ, մինչդեռ գործնական միտքը թույլ տվեց նրան իրացնել իր ներուժը ինժեներական ոլորտում: Բույսերի յուղերով եւ սեփական ֆերմայի ավանակների կաթով օճառի արտադրություն էր սկսել: Արամի ավանակների կաթի համբավը, բուժիչ օճառի տեսքով, կարճ ժամանակում Արցախից դուրս էր եկել, հասել Հայաստան եւ արտերկիր:

Արամը պատմում է, որ բռնի տեղահանությունից հետո, երբ բնակություն հաստատեց Գյումրիում, ծանր հոգեկան ապրումների մեջ էր: Այն ամենը, ինչ տեսել ու ապրել են արցախցիները, հանգեցրել է առողջական խնդիրների, շատ արցախցիներ տառապում են բազմազան հիվանդություններով: Մեկ օրում նրա մազերը գրեթե ամբողջությամբ թափվեցին: Արամն օգտագործեց իր սեփական մեթոդները՝ իրեն բուժելու եւ նյարդային համակարգը հավասարակշռության բերելու համար:

2006 թվականին Վանք գյուղ հերթական այցելություններից մեկի ժամանակ մերձակայքում նկատեց այն ժայռը, որը հետագայում քարե առյուծ դարձրեց: Ժայռակերտ առյուծ ստեղծելու գաղափարը դուր եկավ բարերար Լեւոն Հայրապետյանին, որի աջակցությամբ էլ կյանքի կոչվեց ժայռից առյուծ ստանալու գաղափարը: 2007-ից Արամը սկսեց աշխատել իր հայտնի ստեղծագործության՝ Վանքի առյուծի քանդակի վրա, որը խորհրդանշում էր ուժ, եւ դարձել էր ոչ միայն արցախցիների, այլեւ բազմաթիվ զբոսաշրջիկների համար Արցախի տեսարժան վայրերից ու կոթողներից մեկը:

Պատվերներ է ստանում աշխատանք կատարելու համար: Նրան խնդրել են Ախուրյանում ստեղծել օբյեկտ՝ ջրվեժով, արհեստական սահանքներով: Հետո հրավիրել են Աբովյան՝ առյուծի ժայռաքանդակ ստեղծելու՝ Վանքում պատրաստածի նման: Նա ասում է, որ Վանքի առյուծը ուժի եւ հպարտության խորհրդանիշ էր իր համար, հայրենիքն էր հիշեցնում: Բայց Աբովյանում նույն մասշտաբի ու ձեւի ժայռ չկար, ինչ Արցախում, ուստի նա ստիպված էր մի քիչ տարբերվող բան ստեղծել: Իհարկե, դա նույնը չէ, ինչ բնական քարի հետ աշխատելը, ու թեեւ ժայռ չկար, նա փորձեց փոխանցել նույն ուժն ու վեհությունը:

Բազմատաղանդ արցախցին՝ Արամ Ավագյանը, չի թեւաթափվում, շարունակում է ապրել ստեղծագործ կյանքով՝ ընթացք տալով իր փայլուն գաղափարներին: Նա համոզված է, որ արցախցիները վերադառնալու են իրենց բնօրրանը, ապրելու եւ արարելու են Արցախի սուրբ հողում:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ ԱՐՑԱԽ

ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՏԱԿՍ ԱՇԽԱՐՀԻ ՉԵՄՊԻՈՆ ԴԱՌՆԱԼՆ Է

Դավիթ Հովսեփյանը ծնվել է 2001թ. Արցախի Շուշի քաղաքում: Ավարտել է Շուշիի Խ. Աբովյանի անվան դպրոցը: 2019թ. մտել է ՊԲ ժամկետային զինծառայության: Մասնակցել է 44-օրյա պատերազմին: Դեռ յոթ տարեկան էր, երբ հետաքրքրություն ուներ սամբո մարզաձեւի հանդեպ: Շուշիից գնում էր Ստեփանակերտ մարզումների: Փոքր ժամանակ պարապում էր մարզիչ Ազատ Անդրյանի, հետո՝ մարզիչ Էռնեստ Միրզոյանի մոտ: Դավիթ Հովսեփյանը ՀՀ բազմակի չեմպիոն է, 2019թ. սամբոյի Եվրոպայի չեմպիոն, 2019թ. սամբոյի աշխարհի առաջնության երկրորդ տեղի մրցանակակիր: 2020թ. պետք է մասնակցեր Եվրոպայի առաջնությանը, բայց Covid-ի հետ կապված սահմանափակումները խանգարեցին: Աշնանը վրա հասավ արյունարբու պատերազմը: Դավիթը մասնակցեց պատերազմին: Ինչպես մեր բոլոր շուշեցի հայրենակիցները, Դավիթը եւս ընտանիքի հետ տեղահանվեց եւ բնակվեց Ստեփանակերտի հյուրանոցներից մեկում: Պատերազմը, տեղահանությունը չկոտրեցին քաջորդու կամքն ու ոգին: Վերականգնեց ուժերը եւ կրկին շարունակեց սպորտը՝ սրտի խորքում նպատակադրվելով հաղթել գոտեմարտերում եւ ցույց տալ արցախցու իրական հաղթական ոգին: 2021թ. դարձավ ՀՀ չեմպիոն, որին հաջորդեց Եվրոպայի առաջնության հաղթանակը: Մարզական սամբոյի Հայաստանի մեծահասակների հավաքականի անդամ, մեծահասակների Եվրոպայի ու աշխարհի առաջնությունների բրոնզե մեդալակիր, երիտասարդների Եվրոպայի կրկնակի չեմպիոն, Աշխարհի գավաթի առաջնության փոխչեմպիոն, միջազգային կարգի սպորտի վարպետ Դավիթ Հովսեփյանը 2023-ին հազարավոր արցախցիների նման հարկադրված բռնեց գաղթի ճանապարհը ու այժմ ապրում է Երեւանում՝ վարձակալած բնակարանում: Դավիթը ցավով է խոսում, որ կորցրինք մեր դարավոր բնօրրանը, եւ երբեք չենք կարող համակերպվել այդ դաժան իրողության հետ: Մեր հարցին, թե նրան ինչպես է հաջողվում լինել հոգեպես այդքան ուժեղ՝ պատերազմի թոհ ու բոհով անցնելով, կրկնակի տեղահանության կսկիծը սրտում, բայց մնալ ցավի դեմ չնահանջող մարզիկ, պատասխանեց, որ տարիներ տեւող համառ պարապմունքները սամբոյում կոփում են մարզիկներին թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես, իսկ իր սաների համար ջանք չխնայող, փորձառու մարզչի խրատները նպաստում են ուժեղ մարմնում ուժեղ հոգի ունենալուն:

- Դավիթ, ինչպիսի՞ն էր 2025 թվականը Ձեր մարզական կյանքում:

- Ճիշտն ասած, անցած տարին այն-



քան էլ հաջող չստացվեց իմ մարզական կարիերայի համար: Հիմնական պատճառը վնասվածքներն էին: Կիպրոսի Լիմասոլ քաղաքում կայացած մարզական սամբոյի մեծահասակների Եվրոպայի առաջնությանը նվաճեցի բրոնզե մեդալ: Շատ լավ էի պատրաստվել այդ կարեւորագույն մրցաշարին անձնական մարզչիս՝ Էռնեստ Միրզոյանի հետ միասին: Աշխատել էինք թե՛ ֆիզիկական, թե՛ տեխնիկատակտիկական պատրաստվածության վրա: Հիմնական շեշտը դրել էինք հաղթանակի վրա: Մրցաշարին մեկնել էի մարտական տրամադրությամբ: Գոհ եմ իմ ելույթներից, բայց գոտեմարտի ժամանակ վնասվածք ստացա, ինչն էլ խանգարեց ինձ ու այդպես բրոնզե մեդալի արժանացա: Հանդես եմ գալիս 58 կգ քաշային կարգում: Իհարկե, յուրաքանչյուր նվաճում շատ կարեւոր է նպատակներին հասնելու ճանապարհին:

- Ո՞րն է սպորտում հաջողության հասնելու բանաձեւը:

- Պետք է ունենալ նպատակ, մեծ կամքի ուժ: Անկախ ամեն ինչից՝ նպատակներին հասնելու համար պետք է միշտ անմնացորդ նվիրումով պայքարել, նշաձող դնել եւ հասնել: Իսկ այդ ճանապարհին պետք է ունենալ աշխատասիրություն, կամքի ուժ եւ ամենակարեւորը՝ հավատ սեփական ուժերին:

- Սպորտում ի՞նչ խնդիրների եք բախվում:

- Հիմնականում վնասվածքներն են: 2024 թվականին Աշխարհի մեծահասակների առաջնությանը բրոնզե մեդալ եմ նվաճել Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում: Այդ ժամանակ հաղթեցի նաեւ ադրբեջանցի մրցակցի: Շատ էի ուրախացել այդ հաղթանակով: Բավականին դժվար էր, քանի որ մրցաշարից ընդամենը մեկ ամիս առաջ ձեռքի արմնկային հոդի լուրջ վնասվածք էի ստացել, որը խանգարում էր իմ լիարժեք մրցումներին: Բժիշկները խորհուրդ չէին տալիս մասնակցել, քանի որ վնասվածքը լուրջ էր, սակայն ես հաստատակամ էի, տրամադրված էի մարտական: Որոշել էի գնալ, մասնակցել ու պայքարել, նվաճել ոսկե մեդալ, բայց բրոնզե ստացվեց:

- Ձեր հիշարժան հաղթանակներից ո՞րը կառանձնացնեիք:

- 2021 թվականի մայիսին Կիպրոսի Լիմասոլ քաղաքում կայացած երիտասարդների Եվրոպայի առաջնությանը հաղթեցի ադրբեջանցի մարզիկ Նիջաթ Մամադլիին ու հռչակվեցի երիտասարդների Եվրոպայի արդեն կրկնակի չեմպիոն, քանի որ 2019-ին էլ էի հաղթել: Այդ հաղթանակը երբեք չեմ մոռանա: Հպարտության շատ զգացողություններ ունեցա:

(Մեզ հետ զրույցում Դավիթն անկեղծացավ, որ ամեն գնով ուզում էր հաղթել թուրք մրցակցին: Նրանց թիմը իրենց բնորոշ սադրիչ գործողություններ էր անում մրցման ժամանակ: Միացնում էին Շուշիի մասին երգեր: Դավիթին հայտնի էր դարձել, որ ադրբեջանցի մարզիկը ուզում էր հաղթելու դեպքում օրհներգի ժամանակ իր զոհված եղբոր նկարը ցուցադրեին: Վերջինս մասնակցել էր 44-օրյա պատերազմին, իսկ եղբայրը զոհվել էր Շուշիի մատույցներում: Իր հաղթանակով Դավիթը դա թույլ չտվեց: Ադրբեջանցի տիտղոսակիր մարզիկը ստիպված էր գլուխը կախել, երբ Հայաստանի Հանրապետության օրհներգն էր հնչում՝ ի պատիվ Դավիթ Հովսեփյանի հաղթանակի: Մինչ եզրափակչում գոտեմարտելը՝ Դավիթը պայքարել էր կիսաեզրափակչում եւ վնասվածք էր ստացել: Առաջին մարտը մոլդովացի մարզիկի հետ էր, որը ցավեցնող հնար կիրառեց՝

ոտքի վնասվածք պատճառելով Դավիթին: Մարտը դժվարությամբ էր ընթանում, այնուամենայնիվ Դավիթը հաղթեց: Երկրորդ գոտեմարտը լատվիացի մարզիկի հետ էր: Դավիթն աշխատում էր ցավը ցույց չտալ: Կարողացավ այդ մենամարտում էլ հաղթել: Երրորդ մարտը ուկրաինացի ուժեղ մարզիկի հետ էր, որը աշխարհի չեմպիոն է: Ուժեղ պայքար էր: Դա էլ հաջողվեց հաղթել ու անցնել եզրափակիչ: Եզրափակչում հանդիպեց ադրբեջանցուն, որը նույնպես երեք գոտեմարտում հաղթել էր: Սադրանքներին աշխատել էր չտրվել: Հինգ րոպե տեւող գոտեմարտում մտածել էր միայն հաղթանակի մասին՝ անտեսելով ոտքի ցավը: Դժվար պայքար էր, գիտեր, որ նետում կատարել դժվար կլինի: Մարտավարությունը նախապես մշակել էին: Գոհ էր, որ պատերազմից հետո, հայերի համար այդ ծանր վիճակում կարողացել էր հաղթել ադրբեջանցուն: Դավիթը հաղթանակը նվիրել էր 44-օրյա պատերազմում զոհված տղաների հիշատակին:)

- Ո՞րն է Ձեր ամենամեծ նպատակը:

- Ամենամեծ նպատակս աշխարհի չեմպիոն դառնալն է:

Դավիթ Հովսեփյանն այժմ գտնվում է վերականգնողական փուլում: Եթե վնասվածքներն ապաքինվեն, առաջիկայում կմասնակցի Հայաստանի առաջնությանը, իսկ եթե հաղթի, հնարավորություն կստանա մասնակցելու Եվրոպայի ու աշխարհի առաջնություններին: Մարզիկին ցանկանում ենք հաջողություն:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ ԱՐՑԱԽ

ԴԱՎԻԹ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ՈԳՈՒ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

Դավիթ Խաչատուրյանը ծնվել է 1997թ. մայիսի 28-ին Երեւանում: Մի քանի տարի հետո հոր՝ Շուշին ազատագրող ազգային հերոս Աշոտ Խաչատուրյանի աշխատանքի բերումով ընտանիքով տեղափոխվել է Ստեփանակերտ: Սովորել է Ստեփանակերտի 2-րդ միջնակարգ, ապա 11-րդ ավագ դպրոցներում: Ավարտել է ԱրՊՀ մանկավարժության եւ սպորտի բաժինը: Դավիթ Խաչատուրյանը 2014թ. ՀՀ մուայթայի առաջնության չեմպիոն է, սանդա ուշուի Արցախի չեմպիոն, Հայաստանում կայացած մուայթայի միջազգային մրցաշարի փոխչեմպիոն, 2016թ. MMA-ի ՀՀ չեմպիոն: Արցախի MMA-ի ֆեդերացիայի մարզիչ Դավիթ Խաչատուրյանը 2023թ.-ից նաեւ աշխատում էր Ստեփանակերտի հ. 1 դպրոցում՝ որպես ֆիզկուլտուրայի ուսուցիչ:

Փոքր տարիքից զբաղվում էր թաեքվոնդոյով: Դեռ փոքր էր, երբ մայրը տարավ նրան մարզական խմբակ: Մանկությունից սեր ուներ դեպի սպորտը: Որոշ ժամանակ թաեքվոնդո պարապելուց հետո սկսեց մուայթայ պարապել: Նրան դուր էր գալիս այդ մարզաձեւն իր յուրատիպ կոպտությամբ, հատկապես որ կարելի է աշխատել ութ վերջույթով: Բայց ավելի շատ նախապատվություն էր տալիս պրոֆեսիոնալ մենամարտերին: 2016-ից հետո սկսեց պրոֆեսիոնալ մարզվել խառը մենամարտեր MMA մարզաձեւով մարզիչ Գարեգին Աղաբալյանի մոտ: Խառը մենամարտերը մարտական, ոչ օլիմպիական, ֆուլկոնտակտ մարզաձեւ է, որում կարելի է ուղղահայաց ու հորիզոնական դիրքերում կատարել հարվածներ ու բռնվածքներ: Դա մարտարվեստ է, որում առկա են բռնցքամարտի, ըմբշամարտի, բրազիլական ջիու-ջիցուի, ձյուդոյի, մուայթայի եւ այլ մարտարվեստների բաղադրիչներ: Մասնակցելով մրցաշարի եւ հռչակվելով ՀՀ չեմպիոն՝ Դավիթը ցանկացավ շարունակել իր մարզական ուղին պրոֆեսիոնալ մենամարտերի գծով:

Շրջափակմամբ պայմանավորված սահմանափակումները վատ անդրադարձան նրա մարզական կարիերայի վրա, քանի որ հնարավոր չէր մասնակցել Արցախից դուրս կազմակերպվող պրոֆեսիոնալ մրցաշարերին: Ստեղծված պայմաններում մոտիվացիա գրեթե չկար, շուրջ մեկ տարի համարյա չէր պարապում, մարզական կարիերայում հետընթաց եղավ: Նույնը սակայն չի վերաբերում մարզչական կարիերային, քանի որ նույնիսկ սննդի պակասության դեպքում մեր մարզիկները պարտաճանաչ հաճախում էին մարզումների, իսկ Դավիթը ամեն կերպ ձգտում էր, որ պարապմունքները չդադարեն: Ցրվելու միակ միջոցն այդ ընթացքում թերեւս մարզումներն էին: Աշխատում էր դպրոցում՝ որպես ուսուցիչ եւ միաժամանակ մարզչական գործով զբաղվում:

Տեղահանվելուց հետո որոշ ժամանակ չէր կարողանում սպորտին պատշաճ ուշադրություն դարձնել, քանի որ առաջնային խնդիրներ կային, որոնց լուծումը հետաձգել չէր կարելի: Կատարում էր տարբեր աշխատանքներ, նույնիսկ՝ բանվորական աշխատանք, որ կարողանա հոգալ բռնի տեղահանվելուց հետո առաջացած ֆինանսական խնդիրները: Հետո աշխատանքի ընդունվեց Հերացու «Զինվորի տուն» վերականգնողական կենտրոնում՝ որպես հերթապահ կինեզիստ:

Մարզիչը՝ Գարեգին Աղաբալյանը, շարունակում էր մարզումները Հայաստանի խառը մենամարտերի (MMA) ֆեդերացիայում: Նրա առաջարկով արցախցի մարզիկը վերսկսեց մարզումները եւ կարճ ժամանակում պատրաստվելով՝ ներկայացնելով Հայաստանի խառը մենամարտերի (MMA) ֆեդերացիան, մասնակցեց Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում կազմակերպված GFP-1 (Georgian Fighting Promotion) կազմակերպության պրոֆեսիոնալ մենամարտերին (2024 թ. հունվարի 27): Ոգեւորիչ մենամարտի ընթացքում Դավիթ Խաչատուրյանն ապացուցեց իր գերազանցությունը եւ տակտիկական հմտությամբ հաղթեց վրացի մրցակցին՝ հռչակվելով պրոֆեսիոնալ մենամարտերի հաղթող:

Շարունակելով մարզումները՝ Դավիթ Խաչատուրյանը հերթական հաղթանակով կրկին բարձր պահեց հայկական սպորտի պատիվը՝ արժանապատիվ ներկայացնելով հայրենիքը միջազգային ռինգում:

Մարտի 28-ին Երեւանում կայացած MMA-ի «Hype Fighting-2» միջազգային մրցաշարում Դավիթ Խաչատուրյանը ցուցադրեց բարձրակարգ պատրաստվածություն, մարտական ոգի եւ կամք՝ վստահ հաղթանակ տանելով եւ բարձրացնելով Հայաստանի ու Արցախի դրոշները միասին: Նրա հաղթանակը դարձավ ոչ միայն մարզական նվաճում, այլեւ ազգային ոգու, դիմացկունության եւ հայրենասիրության վառ արտահայտում:

Դավիթ Խաչատուրյանը շնորհակալություն է հայտնում իր մարզչին՝ շարունակական աջակցման եւ նվիրված աշխատանքի համար, հատկապես երբ Արցախից բռնատեղահանվելուց հետո նա շարունակում է իր մարզական ուղին Հայաստանում:

Երախտագիտությամբ հիշատակեց բոլոր այն մարդկանց, որոնք դժվարին պայմաններում շարունակում էին կանգնած մնալ իր կողքին, հավատում էին եւ ոգեշնչում նրան նոր հաղթանակների: Ուրախ է, որ կարողացել է իր մենամարտով ցույց տալ մեր ազգային ոգին: Հատկանշական է, որ Դավիթն ու իր եղբայր Հայկ Խաչատուրյանը, որը նույնպես մարզաշխարհում հայտնի է իր մարզական ձեռքբերումներով, բազմիցս հանդես են եկել միջազգային մրցահարթակներում եւ արժանացել բարձրագույն մրցանակների՝ մրցաշարային աղյուսակներում Հայաստանի անունը բարձրացնելով առաջին հորիզոնականներ:

Հայ ժողովրդի համար նման հաղթանակները միայն մարզական արդյունք չեն, այլեւ ապացույց մեր ժողովրդի անկոտրում կամքի, ազգային ինքնության պահպանման եւ հաղթանակի հավատի:

Հավատանք, որ ուշ չէ այն օրը, երբ Դավիթ Խաչատուրյանը իր հաղթանակները կնվիրի նաեւ Արցախին՝ ազատ ու անկախ հողի վրա բարձրացնելով հաղթական դրոշը հայրենի ռինգում:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

Կոթող

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ. ԲԱՑԱՌԻԿ ԳՏԱԾՈՅԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մարտի 24-ին Հայաստանի պատմության թանգարանում(ՀՊԹ) տեղի ունեցավ «Լեռնահովիտի բացառիկ կոթողը. հայտնություն սերունդների համար» խորագրով ժամանակավոր ցուցադրության բացման հանդիսավոր արարողությունը: 2025թ. Լոռու մարզի Լեռնահովիտ համայնքում պատահաբար հայտնաբերվել է բացառիկ քանդակներով ու մշակմամբ քառանիստ կոթող, որը թվագրվում է 5-7-րդ դարերով: Այն տեղափոխվել է Հայաստանի պատմության թանգարան, որի ցուցադրության բացմանը ներկա էին թանգարանի աշխատակիցներ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատողներ՝ տնօրեն Արսեն Բոբոխյանի գլխավորությամբ, ՀՀ ԿԳՄՍՆ «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Խաչիկ Հարությունյանը, լրագրողներ, Լեռնահովիտ գյուղի ներկայացուցիչներ, հյուրեր: ՀՊԹ տնօրեն Դավիթ Պողոսյանը ողջունեց ներկաներին, կարևորեց նորահայտ կոթողի թանգարանում ցուցադրվելը՝ որպես մեծ ձեռքբերում մեր երկրի, ժողովրդի ու թանգարանի համար: Ներկայացրեց նաև Լոռու մարզի Լեռնահովիտ գյուղի բնակիչ Նվարդ Գալստյանին, որի տան բակում պատահաբար հայտնաբերվել էր կոթողը: Այս առումով կարևորեց մեր երկրի համայնքների բնակչության դերը, որ շուտ են տեղեկացնում նման գտածոների մասին, պահպանում են, մինչև մասնագետների տեղ հասնելը: «Կարելի է ասել՝ առաջին պահպանողներն նրանք են, և նման գտածոները կարևոր են նաև իրենց ու բնակավայրի, համայնքի առումով», -հավելեց Դ. Պողոսյանը:

Ն. Գալստյանը շնորհակալություն հայտնեց կոթողի ցուցադրման բացմանը հրավիրվելու համար և ուրախ է. գտնված քարն արդեն իր տեղում է և ապահով: Տեղեկացրեց՝ քառանիստ կոթողը գտնվել է, երբ իրենց տան բակում գազի խողովակի համար տրակտորով փոս են քանդել: Սկզբում մտածել է,որ սովորական քար է, բերել են բակ, որ օգտագործեն, բայց, երբ տեսել է դրա վրայի քանդակները, արդեն տեղեկացրել է մասնագետներին:

Կոթողի հիմնական առանձնահատկությունը հստակ, մանրամասն և ճշգրիտ քանդակված հորինվածքներն են՝ սուրբ զինվորը, Աստվածամայրը մանուկ Հիսուսի հետ և Քրիստոսի մկրտությունը Հորդանան գետում:

Կոթողի ինքնատիպ քրիստոնեական պատկերագրությունը ներկայացրեց պեղումների ղեկավար, պ. գ. դ., պրոֆեսոր Համլետ Պետրոսյանը: Նշեց՝ կոթողի հետախուզական պեղումներն իրականացվել են 2025թ. նոյեմբերին «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի և ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից: Պեղումներից հետո կոթողը տեղափոխվել է Հայաստանի պատմության թանգարան: Կարևորեց հատկապես այն, որ առաջին անգամ են վաղ քրիստոնեական ժամանակների կոթողի վրա տեսնում Սուրբ մկրտության տեսարանի քանդակ. սա եզակի երևույթ է: Կոթողի յուրաքանչյուր կող 28 սանտիմետր է, և այդ կողերին շատ նուրբ աշխատանք է կատարվել:

Ելույթներից հետո ներկաները թանգարանի երրորդ հարկում ծանոթացան նոր ցուցանմուշին, որը, հիրավի, մեր ժողովրդի ստեղծած մշակութային ժառանգություններից մեկն է և պատկանելու է սերունդներին:

Զոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

ԳՐԱԿԱՆ ԱՐՑԱԽ

Կամո ԲԱԼԱՅԱՆ

ՏԱԳՆԱՊ

Տագնապում են բոլորը,
Տեր իմ,
Որ արյունով է բացվում օրը,
Որ թույլերին հոշոտում
Եվ կործանում է հզորը...

Որ մշուշապատ ու սևակնած են,
Երկինք ու հորիզոնը,
Եվ ոտքերի տակ տրորվում է անզորը...

Որ արարչական կերտվածքը,
Քո պատկերով ու Քո խոսքով
Ստեղծվածը,
Օր օրի դառնում է ավելի դաժան,
Եվ արնախում ու արյունռուշտ,
Մոլորյալ ու անկուշտ...

Որ հոշոտում է տարածքներդ սրբազան,
Ինչպես՝ ամեհի գազան...

Կուռքերն են պատվանդանին Երկրպագության...

Եվ ապրելը, կյանքը ողբերգություն,
Արյուն, արնահեղություն,
Մոռացվող սրբություններ և պղծություն...

Մաշվում են բևեռները,
Խախտվել են նժարները
Եվ կշիռները...

Չեն փակվում վիհերը.
Անորոշության, ապականության,
Կորուստ է
Հոգու և մարմնի վեհության...

Եվ քննություն ու փորձություն,
Մոլություն ու մոլորություն,
Նենգություն ու ագահություն,
Չեն հարաբերվում եզրերը,
Կատարյալի, ներդաշնակության,
Արարչական շինության,
Իմաստության,
Եվ մարդկային էության,
Ու բանականության...

Անորոշություն, քաոս ու խառնակություն...

Ուրի՞շը, թե մենք ենք,
Մեր ընթացքը որոշում,
Մե՞նք ենք կատարում ընտրություն,
Թե՞ օտար ուժեր են մեզ ուղղորդում,
Երբ ավելի խորն ենք խրվում մեղսալից
Ճահճում...

Երկի՛ր, շքեղ մարմինդ,
Սուզվում է թանձրացող մշուշում.
Եվ դեպի ո՞ւր է
Խելահեղ ժամանակը մեզ քշում,
Ո՞վ է մեզ վերից,
Դեպի վար քաշում...

Թերի թե անթերի,
Ժամանակը՝ բարի թե չարի.
Չեմ լսում ողողանջները,
Երկրային և երկնային,
ԱՍՏՎԱԾԱՅԻՆ զանգերի...

Բացվել է գազանի ահավոր
Ու անկուշտ երախը,
Եվ հոշոտում է մարդուն վախը...

Մի կողմ է քաշվել լույսի սրբարարը,
Եվ խորանի վրա տիրում է խավարը,
Գլխավորը՝ շահն ու ավարը,
Թմրում են ժամանակն ու դարը...

Եվ ո՞րն է քո հնձածը,
Ստացածդ, քո իսկ՝ ցանածը...

Ո՞րն է գերակշիռը,
Բարի՞քը,
Թե՞ չարիքը...

Չկա հաղթող.
Կործանվում է,
Ե՛վ պաշարողը,
Ե՛վ պաշարվողը...

Եվ մարդկային կյանքը
Դարձել է այսքան էժան,
Երբ ամեն ինչ արդեն,
Արվում է բաժան- բաժան,
Եվ չկա էլ ոչինչ սրբազան...

Ամենը թաթախված մեղքի մեջ,
Ամենը՝ նենգամիտ, անարժան,
Եվ վերանում է եղածը
Հարգանքի արժան...

Եվ ամենը վիժում է արդեն,
Ամենը տանում է կործանման...
Եվ ամենուր տիրում է առ ու փախ,
Եվ ամենը դարձել է առ ու ծախ...

Հովհաննես ԱՅՎԱԶՈՎՍԿԻ «ՔԱՈՍ»

Մեծ խաղերի մեջ մոլորվել
Եվ տարուբերվում ես այս ու այն կողմ.
Մերթ՝ աջ, մերթ՝ ձախ,
Մերթ՝ արևելք, մերթ՝ արևմուտք,
Մերթ՝ հյուսիս, մերթ՝ հարավ,
Բայց մնում ենք,
Կենարար խոսք ու մտքի՝
Արդարության և ճշմարտության ծարավ...

Երկի՛ր,
Վտանգված,
Դու չսանձված ու չթամբված,
Հրեղեն նժույգ,
Դրախտի դեռ չբացվող դարպաս...

Եվ պահանջդ արդար,
Որ զարկվեց հզորների սրտերին քար,
Անկախության ձգտումիդ,
Անհաղորդ ու սառն...

Հաղթողը, տիրողը,
Ուժն է անարդար.
Երբ սահմանները
Գծում են սրերը,
Գերտերությունները և հզոր գահերը...

Տագնապն է պաշարել հոգիդ և մարմինդ բազմաչարչար
Եվ տառապյալ, լքված ու չարեչար...

Եվ ամեն ինչ դարձել է դժգույն,
Ամենուր դավ է, դավադրություն,
Գաղթական, տարագիր և անտուն,
Եվ չունենք, երկիր իմ,
Խաղաղ քուն, անգամ՝ խարխուլ մի բուն...

Փլվում է ԴՐԱԽՏԴ,
Ցնծում է՝ ԲԱՆՍԱՐԿՈՒՆ...
Ահագնացող մեղքերը կալանել են ամենեցուն,
Երկիրը ողբով է լեցուն...

Տագնապում են անգամ զորականն ու զինվորը,
Երբ մահաբեր ռումբն է ծվատում օդը,
Երկինք ու երկիր պատում է,
Վառոդահոտը...

Ցնցվում ենք, լացում ու հեծեծում,
Տանջվում ու տառապում,
Ցավից քրքրվում ու տնքում,
Համբերում, խոնարհվում, սգում,
Երբ հազարների
Մահվան բոթն ենք լսում,
Եվ լուսաբացը արյամբ է բացվում...

Բայց դեռ ելնում ենք ցավի խորքից
Եվ շտկվում ենք նորից ու նորից...

Լացում ու կծկվում ենք անզորությունից,
Մանրացել ենք ու մանրանում,
Ինքներս մեր ցավից ծանրանում,
Սարսափում ու տագնապում ենք,
Դառնանում ու ծվատվում ենք,
Հուսահատվում ենք փորձություններից,
Մերթ վհատվում, մերթ դիմակայում...

Մի՞ թե լքել է մեզ բարի հովիվը,
Մի՞ թե չի արձագանքի մեզ Տերը,
Մի՞ թե ցաքուցիր, լքված ու անտիրական,
Գազանի երախում կհոշոտվեն
Գառ ու ոչխարների
Անտեր հոտերը...

Տագնապում ենք և խարխափում
Խավարում,
Երբ չգիտենք,
Նորի՞ց կհայտնվենք չարի երախում,
Կլինի՞ կրկին մի նոր արյունալի բախում,
Թե՞ կավարտվի գահերի խաղը,
Նորից կծաղկի ու կցնծա Արցախը...

Տագնապում են ժամանակները,
Հոգին և մտքերը,
Եվ շինությունները,
Երբ որոտում են զենքերը,
Եվ երերում հիմքերը...

Տագնապում են հերկերը, արտերը, բերքերը,
Երբ ծեծում է կարկուտը, պատում է մութը,
Երբ մարում է մարդու մեջ գութը,
Երբ կործանում և տիրում է անգութը,
Երբ խամրում են հոգու լույսերը,
Եվ փլվում են սպասումներն ու հույսերը...

Տագնապում է
Դարավոր անտառը, անգամ մենավոր ծառը,
Որ կարող է դառնալ կրակի ճարակ,
Տագնապում է անգամ ծովը,
Որ մի օր կարող է դառնալ ցամաք,
Նույնիսկ Արեգակը,
Որ կսպառվի իր ներսում,
Ջերմություն ու կրակ,
Տագնապում են,
Աղբյուրը, վտակը, գետակը,
Հանկարծ որ տարին չլինի երաշտ...

Տագնապալից են ժամանակները,
Անհաշտ,
Մարդը՝ անկուշտ, ագահ, նյութապաշտ...

Տագնապում է անգամ,
Հզոր երկրի հզոր նախագահը,
Երբ զգում է,
Թե ոտքերի տակ
Ինչպես է երերում գահը...

Տագնապում ենք,
Որ երկի՛ր, այս գունդը
Գուցե և հաջորդ պահին
Գլորվի անդունդը...

Տագնապում ենք,
Որ ծանրացած ու ծանրացող բեռը մեղքի,
Մի օր երկիրը կճեղքի...

Տագնապում ենք,
Երբ չգիտենք, թե ինչ կլինի,
Այս ամենի վերջը,
Գուցե չարը շրջում է
Մեր պատմության վերջին էջը...

Տագնապում ենք,
Երբ խճճել են անկախության երթը,
Երբ չի երևում դժվարին ելքը,
Երբ մարում է մեր ոգու եռքը...

Երբ մարդասպան է,
Երկի՛ր,
Ե՛վ միտքը, և՛ ձեռքը,
Արնածոր է հոգուդ և մարմնիդ
Վերքը...

Տագնապում են ազգը, երկիրը
Երբ վտանգված է
Անկախության ճանապարհին
Մեր դժվարին ճակատագիրը...

Եվ երկրի վրա կախվել է հարցականը,
ՏԵՐԸ կբերի՞ մեզ խաղաղությունը,
Թե՞ նորից հող ու երկինք,
Կծվատի մահաբեր ականը...

Տագնապալից է ամեն վայրկյանը.
Գուցե նորից եռա
Անկախության շարժումը,
Կամ նորից ծավալվի Գոյամարտը,
Կամ մոլորակը տանի կործանման
Երրորդ աշխարհամարտը...

Ամենուր տագնապն է մեզ կրծում,
Եվ տագնապից չկա պրծում...

Տագնապահար է անգամ ՏԵՐԸ,
Որ Երկրի վրա առուծախ է դառնում,
Եվ սառչում է սերը...

Տագնապում է և խորանը աղոթքի,
Տեսնելով կեղծիքը, սրտի և մտքի...

Տագնապահար ենք կորցրածի համար,
Եվ տագնապում ենք գտածի համար...

Այնքան են ահագնացել
Վախը, ահը, սարսափը,
Տագնապահար է, ինքն իրենից,
Անգամ տագնապը...

ՏԱԳՆԱՊԸ
Դարձել է գերագույն զենքը չարի,
Չարը տիրակալը
Երկրի և դարի...

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» կրթամշակութային ՀԿ

✉ ք.Երևան,
Անտառային փ. 188/16 ☎ 097-22-38-27
E-mail: gorctert@mail.ru: *www.lusarar.info*

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները:
Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Թերթը վաճառքի ենթակա չէ:

Տպագրվում է «Լիմուշ» ՍՊԸ տպարանում:
Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
Տպաքանակ՝ 500
Ստորագրված է տպագրության՝ 30.03.2026թ.: